

**«ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ»
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
Գազիկ Տերտերյան**

Հանրահայտ է, որ ազգային եւ պետական համակարգերի անվտանգությունը մեծ չափով պայմանավորված է այդ համակարգերի ունեցած մտավոր ռեսուրսներով, դրանք կազմակերպելու եւ նպատակաուղղված կիրառելու ունակությամբ: Հայտնի է նաեւ, որ բացի ավանդական գիտակրթական կառույցներից՝ ակադեմիական ինստիտուտներից եւ բուհական հաստատություններից, մտավոր ռեսուրսների կազմակերպման կարելու ձեւաչափ են հանդիսանում նաեւ հատուկ հետազոտական կենտրոնները: Նման կառույցները հայկական տեղեկատվական դաշտում ընդունված է անվանել «ուղեղային կենտրոններ» (ՈւԿ): Հատկանշական է, որ Արեւմուտքում ՈւԿ-ները ավելի հաճախ կոչվում են «մտքի ֆաբրիկաներ», «ազգային շահ արտադրող» կամ «գաղափարախոսություն ստեղծող» կազմակերպություններ՝ այդպիսով վերագրելով դրանց ավելի դինամիկ իմաստ: Բնորոշ է նաեւ, որ կայացած ՈւԿ-ների կառուցվածքում հաճախ տեղ են գտնում նաեւ կրթական կենտրոնները, որոնց նպատակն է ազգային ընտրանին համալրել գաղափարապես հասուն, ստեղծագործ եւ մասնագիտորեն լավ պատրաստված կադրերով:

Դասական «ուղեղային կենտրոնները» Դասական ՈւԿ-ների (որպես այդպիսին ընդունված է համարել Երկրորդ համաշխարհայինից հետո ստեղծված եւ իրենց հանրությունում արդեն ինստիտուցիոնալ կարգավիճակ ձեռք բերած ՈւԿ-ները) խնդիրն է ազգային անվտանգության (ԱԱ) համատեքստում նորարարական գաղափարներ, հեռանկարային նախագծեր, հայեցակարգեր, տարաբնույթ ռազմավարական-մարտավարական մշակումներ, փորձագիտական խորհրդատվություններ տրամադրել պետական-քաղաքական (հաճախ՝ նաեւ հոգեւոր) կառույցներին եւ ազգային կապիտալը ներկայացնող ընկերություններին¹: Օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ-ին են պատկանում, մասնավորապես, «տեղեկատվական պատերազմ», «ցանցակենտրոն-տեղեկատվական համակարգ» հասկացությունների ձեւավորումը, դրանց հետագա հայեցակարգային կատարելագործումը եւ կիրառական տեխնոլոգիաների վերածումը: Համարվում է, որ նման մշակումների շնորհիվ է նաեւ Միացյալ Նահանգներն առաջատար դիրքեր գրավում գլոբալ հարթությունում:

ՈւԿ-ների արդյունավետ գործունեությունը հնարավոր է միայն այն հանրություններում, որտեղ առկա են, մասնավորապես, հետևյալ պայմանները.

1. Պետական-քաղաքական եւ տնտեսական համակարգում մտավոր ռեսուրսների գործոնի կարելությունը, գիտակրթական ոլորտին անհրաժեշտ միջոցներ տրամադրելու կամքը եւ կարողությունը²,

2. պետական-քաղաքական համակարգի կողմից ՈւԿ-ների գործունեությունն ազգային շահերին համաձայն ուղղորդելը³, ինչպես նաեւ ՈւԿ-ներից ստացված արդյունքները գործնական հարթությունում կիրառելու այդ համակարգի կազմակերպական ունակությունը,

3. ՈւԿ-ները սնուցող համապատասխան ակադեմիական եւ բուհական միջավայրի առկայությունը,

4. ՈւԿ – Պետություն, Ազգային կապիտալ – Ակադեմիական եւ բուհական գիտություն օղակների փոխհարաբերություններն ապահովող արդյունավետ մեխանիզմների առկայությունը:

Որպես կանոն, տվյալ պետության ՈւԿ-ները կազմում են համացանց եւ գործում են փոխլրացման սկզբունքի համաձայն. արդարացիորեն համարվում է, որ նման համագործակցությունը խիստ արդյունավետ է եւ հաճախ հանգեցնում է սիներգիկ էֆեկտների:

Նկատենք, որ ՈւԿ-ների համակարգի ստեղծումը աշխատատար ու տեսական գործընթաց է. այն պահանջում է համապատասխան «դպրոցների» եւ ավանդույթների ձեւավորում, կրեատիվ կադրերի պատրաստման տարաբնույթ մեթոդիկաների կիրառում (օրինակ, ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիան շնորհալի հետազոտողների «բացահայտումը» նախընտրում է սկսել դպրոցներից) ու, թերեւս ամենակարեւորը, հանրության կողմից նման ՈւԿ-ների անհրաժեշտության գիտակցում:

Պետք է նաեւ ամրագրել, որ ՈւԿ-ների համակարգը հիմնվել է առավել զարգացած, ինստիտուցիոնալ բնույթ է ընդունել Միացյալ Նահանգներում: Միեւնույն ժամանակ, այսօր գրեթե բոլոր կայացած երկրներում հիմնվել են նմանատիպ կառույցներ, որոնք կրում են իրենց հանրությունների բնորոշ առանձնահատկություններ:

Համաձայն փորձագիտական մոտեցումների, ՈւԿ-ների համակարգի կայացվածությունը տվյալ հանրության ԱԱ կարելորագույն ցուցիչներից է: Եթե անգամ նման պնդումը դիտարկենք ֆորմալ տեսանկյունից, ապա այն արդարացված է. մտավոր ռեսուրսները տեղեկատվական անվտանգության (ՏԱ) գլխավոր բաղադրիչներից են, իսկ ՏԱ գործոնի անտեսումը տեղեկատվական դարաշրջանում խիստ խոցելի է դարձնում ցանկացած հանրության ԱԱ համակարգը:

խորհրդային իրողություններ. Նպատակ ունենալով դիտարկել հայկական մտավոր ռեսուրսների կազմակերպման խնդիրները՝ փորձենք անդրադառնալ խորհրդային գիտական համակարգին, որի մասն էին կազմում ԳԳ-ում գործող հետազոտական կառույցները:

ԽՍՀՄ-ում գործում էին մի շարք կազմակերպություններ, որոնք, կրելով խորհրդային համակարգին բնորոշ յուրահատկությունները, այս կամ այն չափով իրագործում էին ՈւԿ-ներին բնորոշ գործունեություն: Որոշ պարագաներում նման կառույցները ներկայացնում էին ակադեմիական ինստիտուտներ. այդպիսին էր, օրինակ, ԳԱ ԱՄՆ եւ Կանադայի ինստիտուտը, որը հաջողությամբ գործում է առայսօր: Այդօրինակ ՈւԿ-ները, գլխավորապես տեղակայված լինելով Մոսկվայում, անմիջականորեն սպասարկում էին տերության քաղաքական ղեկավարությանը՝ «կենտրոնին», որը բացարձակ մենատեր էր արտաքին եւ ներքին քաղաքականության ոլորտում: Միութենական հանրապետություններն ընդամենը կատարում էին «կենտրոնի» դիրեկտիվները եւ ՈւԿ-ների կարիքը չունեին: Այդպիսով ՈւԿ-ների տիպի կառույցների ստեղծման եւ գործունեության կազմակերպման մշակույթը, բացառությամբ սակավաթիվ դեպքերի, միութենական հանրապետություններում, դրանց թվում՝ Ղազախստանում, չէր ձեւավորվում⁴: Այդ համատեքստում առանձնահատուկ տեղ էին գրավում ուսումնասիրությունները հայկական Սփյուռքի ուղղությամբ, որի կարեւորությունը «կենտրոնին» ըմբռնում էր, եւ, բնականորեն, ոլորտի «պատվերները» Երեւանին էին «իջեցվում»:

ՈւԿ-ները Երրորդ հանրապետությունում. ԽՍՀՄ փլուզմանը զուգընթաց, կազմալուծվեց նաեւ խորհրդային գիտական համակարգը: Բավական է նշել, որ Երրորդ հանրապետությունում այսօր գիտությանը հատկացվում է \$20-30 մլն, մինչդեռ նախորդ դարի 80-ականներին ոլորտի ֆինանսավորումը կազմում էր շուրջ \$600 մլն⁵: Միեւնույն ժամանակ, այսօր հանրապետությունում գործում են ՈւԿ-ների տիպի ավելի քան 30 հաստատություններ, որոնք, սակայն, իրենց պատվերները եւ համապատասխան նյութական աջակցությունը ստանում են այլ երկրներից եւ միջազգային կազմակերպություններից: Նման հաստատությունների աշխատանքները նպատակաուղղված են դեպի իրենց պատվիրատուները եւ, այսպիսով, միշտ չէ, որ կարող են սպասարկել մեր ազգային շահերը: Սակայն դա չի նշանակում, թե պետք է անտեսել այդ կենտրոնների գործունեությունը եւ չփորձել օգտագործել դրանք՝ հանուն մեր շահերի. դա հատկապես վերաբերում է սոցիոլոգիական եւ տնտեսագիտական ոլորտի հետազոտություններին, որոնց արդյունքների համալիր վերլու-

ծությունը պետք է որ օգտակար լինի: Այլ խնդիր է, որ այդ արդյունքները միշտ չէ, որ հասանալի են հանրությանը:

2000-ից, երբ հանրապետության տնտեսությունը սկսեց վերականգնվել, իշխանության որոշ օղակների եւ ընտրանու առանձին ներկայացուցիչների նախաձեռնությամբ հիմնվեցին նաեւ ազգային պատվերներ կատարող ՈւԿ-ներ: Նշենք, որ դրանց գործունեության սկզբնական փուլում կային բազմաթիվ անբարենպաստ գործոններ, որոնցից նշենք մի քանիսը.

1. պետական - ազգային - քաղաքական մարմինների, ինչպես նաեւ բիզնես կառույցների թերահավատությունը մտավոր, հատկապես՝ հայրենական⁶ մտավոր «արտադրանքի» նկատմամբ,

2. ազգային գիտության անբավարար վիճակը՝ հատկապես ԱԱ տեսանկյունից հրատապ ոլորտներում, ինչն իր հերթին պայմանավորում է վերլուծաբանական հանրության ոչ այնքան բավարար մակարդակը,

3. ՈւԿ-ների ձեւավորման եւ ղեկավարման մշակույթի ընդհանուր պակասը քաղաքական եւ փորձագիտական հանրությունում:

Ներկայումս իրավիճակը մասամբ բարելավվել է, չնայած որոշ անբարենպաստ հանգամանքներ (հատկապես ազգային գիտության անմխիթար վիճակը) շարունակական բնույթ են կրում: Միեւնույն ժամանակ, արձանագրված առաջխաղացումը դեռեւս դժվար է բավարար համարել: Եղած հիմնախնդիրներից առանձնացնենք հետեւյալները.

❖ Հայրենական ՈւԿ-ները դեռեւս չեն վերածվել ինստիտուցիոնալ կառույցների, իսկ նրանց մշակումների արդյունքները, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներով, էական ազդեցություն չեն գործում պետական-քաղաքական էլիտայի ու հասարակության գործունեության վրա,

❖ ՀՀ-ում գործող ՈւԿ-ների ուղղվածությունն, ազգային շահերի համատեքստում, հաճախ օպտիմալ չէ, իսկ նրանց ընդհանրական գործունեությունը դժվար է անվանել համակարգված: Չնայած իրենց սակավությանը՝ ՀՀ ՈւԿ-ները միմյանց հետ անբավարար են համագործակցում, իսկ համացանցային աշխատառճ դեռեւս չի ձեւավորվել,

❖ ԱԱ համատեքստում իրագործվող տեսական-գործնական մշակումների արդյունավետությունն այսօր պայմանավորված է տարաբնույթ մեթոդների յուրացման եւ կիրառման հնարավորությունով, մինչդեռ դրանց ձեռքբերումը եւ համապատասխան կադրերի պատրաստումը խիստ ծախսատար գործընթացներ են, որոնց համար միշտ չէ, որ հնարավոր է ստանալ պետական աջակցություն,

❖ ազգային կապիտալի ներկայացուցիչների զգալի մասի մոտ դեռևս չի ձեւավորվել ՈւԿ-ների անհրաժեշտության եւ կարելորության գիտակցությունը:

¹ Որպես կանոն, ՈւԿ-ների հիմնական պատվիրատուներն են պետական-քաղաքական կառույցները, իսկ ներկայումս նրանց հետ մրցակցություն է կազմում նաեւ բիզնես-տնտեսական հատվածը:

² Դա չի բացառում, որ որոշ ՈւԿ-ներ կայացման եւ զարգացման որոշակի փուլում իրենց ինովացիոն մշակումների հիման վրա սկսում են իրագործել նաեւ կոմերցիոն նախագծեր կամ նման նախագծերի համար ստեղծում են համապատասխան մասնաճյուղեր կամ ընկերություններ: Սասնավորապես, շրջանառության մեջ գտնվող համակարգչային «ռազմավարական խաղերի» մի մասը նման գործունեության արդյունք է:

³ Հատկանշական է, որ վերլուծաբանական գրականությունում կարելի է հանդիպել այն տեսակետին, թե որոշ երկրների ՈւԿ-ներին այսօր հատուկ են նաեւ կորպորատիվ շահեր, որոնք որոշ պարագաներում կարող են ավելի գերադասվել, քան ազգային շահերը:

⁴ Հարկ է նշել, որ իրադրությունն այլ էր, օրինակ, բնագիտության ոլորտում, որտեղ առանձին անհատների եւ ազգային հատկանիշների շնորհիվ, Երկրորդ հանրապետությունում գործում էին համամիութենական, իսկ երբեմն անգամ՝ համաշխարհային մակարդակի առաջատար գիտական կենտրոններ:

⁵ Պետք է ասել, որ անգամ այդ սուղ միջոցները, մասնավորապես հումանիտար ոլորտում, միշտ չէ, որ նպատակաուղղված են տնօրինվում: Երբեմն ֆինանսավորվում են հետազոտություններ, որոնք հրատապ չեն եւ նույնիսկ մարգինալ բնույթ են կրում, իսկ սփռված Հայության հիմնախնդիրների հետազոտություններն անտեսվել են եւ միայն վերջերս են սկսել վերականգնվել՝ շնորհիվ նորաստեղծ Սփյուռքի նախարարության ջանքերի: Հատկանշական է նաեւ, որ չնայած ֆինանսավորման ծավալների նվազմանը, բնավ չի պակասել գիտական կոչումներ ստացողների թիվը. այդ գործընթացն այսօր ակնհայտորեն այլ՝ ոչ գիտական իմաստավորում է ստացել:

⁶ Նման իրողությունը փորձագիտական հանրությունում ընդունված որակելի իբրեւ «ներմուծողի» հոգեբանության արտահայտություն: Այդօրինակ թերահավատությունը բնորոշ է նաեւ Սփյուռքի ազգային եւ տնտեսական կառույցների ներկայացուցիչներին:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ *Ռուբեն Մելքոնյան*

Հայտնի է, որ Հայությունը ներսից պառակտող ամենավտանգավոր երեւոյթներից է փոխադարձ անհանդուրժողականությունը, միմյանց հանդէպ խորթության արգահատելի «սովորույթը», որը ժամանակ առ ժամանակ ցայտուն է զգացվում: Այս երեւոյթի անքակտելի մասն են կազմում Հայության բաժանումներն ըստ ծագման, բնակւոյթյան վայրի, դավանանքային, կրոնական, կուսակցական պատկանելւոյթյան:

Վերը թվարկած երեւոյթներից անմասն չէ նաեւ Թուրքիայի, մասնավորապէս՝ Ստամբուլի հայությունը: Ստեղծված իրավիճակն ավելի լավ պատկերացնելու համար հարկ է համառոտ անդրադառնալ Ստամբուլի հայ համայնքի որոշ մանրամասներին:

Թուրքիայի Հանրապետւոյթյան վարած քաղաքականւոյթյան հետեւանքով պոլսահայ համայնքում արտագաղթերը, զանազան ինտենսիվւոյթյանք, շարունակական բնույթ են կրել: Համեմատւոյթյան համար փաստենք. 1920-ականներին Թուրքիայում կար շուրջ 300 հազար հայ, իսկ այժմ, ըստ պաշտոնական տվյալների, քրիստոնյա հայերի թիվը ընդամենը 60 հազար է: Սա անդրադարձել է նաեւ հայկական դպրոցների վրա. այսպէս, եթէ 1972–1973 ուսումնական տարում Ստամբուլում եղել է 32 հայկական դպրոց՝ 7366 աշակերտով, ապա 1999–2000 ուստարում դպրոցների թիվը նվազել է 18-ի՝ 3786 աշակերտով: Իսկ 2008թ. մայիս ամսվա տվյալներով՝ Ստամբուլի 18 հայկական դպրոցներում կա 3072 աշակերտ: Ըստ պոլսահայ մանկավարժ Կարո Փալյանի. «Ամեն տարի 150-200 աշակերտ ենք կորցնում, եւ եթէ այսպէս շարունակվի, ապա առաջիկա տարիներին ստիպված կլինենք 6-7 դպրոց փակել»: (Անշուշտ, հայ աշակերտների թվի նվազումը կապված չէ միայն արտագաղթերի հետ եւ ունի հիմնավոր այլ պատճառներ եւս):

Արտագաղթերի հետեւանքով առաջացած այդ բացը պոլսահայ համայնքը լրացրել է տարբեր տարիներին գավառներից Ստամբուլ տեղափոխված հայւոյթյան բեկորների շնորհիվ: Գավառահայերի փրկւոյթյան գործով զբաղվել են Գարեգին Խաչատուրյան պատրիարքը (1951–1961թթ.), Շնորհք Գալուստյան պատրիարքը (1961–1990թթ.), որոնց ջանքերով շատ թրքախոս, քրդախոս եւ ուժացման եզրին հասած հայեր տեղափոխվեցին Ստամբուլ, իսկ նրանց երեխաները սովորելով հայկա-

կան դպրոցներում՝ կարողացան ինչ-որ չափով ինտեգրվել համայնքին, եւ նաեւ նրանցից է ձեւավորված այսօրվա պոլսահայությունը:

Սակայն, այսպիսի տարբեր շերտերից բաղկացած պոլսահայության մեջ միշտ էլ կարելու է արդիական է եղել փոխադարձ ընկալման խնդիրը. պոլսահայ դիսկուրսում տարածված են եղել եւ այժմ էլ պահպանվում են ըստ ծագման վայրի հայերի բաժանումները կամ «իսկական պոլսահայ»- գավառահայ բաժանումները: Ընդ որում, «իսկական պոլսահայ» նշանակում է ավելի քաղաքակիրթ, ավելի բարեկեցիկ, իսկ գավառացի՝ ցածր մակարդակի, գավառական տարբեր բարքերի կրող եւ այլն: Մշակութային եւ այլ կարգի տարբերությունների վրա հիմնված փոխադարձ խորթությունը ցայտուն է երեւում ստամբուլաբնակ եւ հայաստանցի հայերի (որոնք Թուրքիա են գնում աշխատանք գտնելու համար) եւ անգամ ստամբուլաբնակ դարձած գավառահայության տարբեր խմբերի միջեւ: Մեր անձնական դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ ներկայումս այս անջրպետի ամենակարեւոր պատճառներից է դասակարգային տարբերությունը: Այսինքն՝ կարող ենք ասել, որ Ստամբուլում «տեղային» առանձնահատկությանը զուգահեռ ու, միգրացե, շատ ավելի տարածված է «դասակարգային» առանձնահատկությունը: Հենց դասակարգային տարբերությունն է հաճախ խոչընդոտ հանդիսանում, որպեսզի ստամբուլաբնակ հայության տարբեր խմբեր կարողանան ազատ շփվել միմյանց հետ, քանի որ նրանց կենցաղը, ապրելակերպը, մտածելակերպը եւ անգամ խոսվածքը տարբեր են: Դասակարգային խորթության հետեւանքով երբեմն գրանցվում են ամուսնալուծություններ տարբեր տարիներին Ստամբուլ տեղափոխվածների միջեւ, ինչը ցույց է տալիս, որ նրանց միջեւ առկա տարատեսակ անջրպետները տասնամյակներն անգամ չեն կարողացել հաղթահարել:

Ի դեպ, խոսելով ամուսնությունների մասին՝ անդրադառնանք ծպտյալ հայերի մեջ շարունակվող ներքին ամուսնությունների խնդրին եւ բերենք մեկ օրինակ, որը, մեր կարծիքով, բավական խոսուն է: Այսպես, Խարբերդի գյուղերից մեկից Ստամբուլ տեղափոխված մի ծպտյալ հայի կամ այլ խոսքերով՝ կրոնափոխ «դյոնմե» կնոջ հետ զրույցի ընթացքում պարզվեց, որ նա ցանկանում է ամուսնացնել իր երկու որդիներին եւ հարսնացու է փնտրում: Մեր հարցին, թե արդյոք ցանկանում է հայ հարսնացուներ գտնել՝ նա պատասխանեց. «Ոչ, հայերը մեզ հետ չեն ամուսնանա»: Այդ դեպքում, հարցրի, թե երեւի մուսուլման թուրք կամ քուրդ հարսնացու է փնտրում, որին հետեւեց նրա պատասխանը. «Ոչ, ցանկանում եմ մեզ նման ընտանիքներից հարսնացուներ գտնել»: Փաստորեն, կարող ենք ասել, որ կրոնափոխ հայության շրջանում ներքին ամուսնությունների

դրող ազդակներից մեկը հնարավոր է համարել հայության մյուս խմբերի հետ ինտեգրված չլինելու փաստը: Անգամ Ստամբուլում հաստատված կրոնափոխ կամ կրոնադարձ հայերը, չինտեգրվելով պոլսահայության մեջ, ստիպված կամ ենթագիտակցորեն ձեւավորել են (կամ գտնվում են ձեւավորման ճանապարհին) մի առանձին ազգագրական խումբ, որն իրեն տարբեր է համարում թե՛ հայերից, թե՛ թուրքերից: Միգուցե հենց այս ինտեգրված չլինելու հետեւանքով է նաեւ, որ այսօր Թուրքիայի մուսուլման համաձայնահայերի մի մասն իրեն լրջորեն համարում է «հեմձին» ազգի ներկայացուցիչ, իսկ հայերենի այն բարբառը, որով խոսում է՝ «համաձեմերեն»: Փաստ է նաեւ այն, որ մուսուլման համաձայնահայերի նմանատիպ դրսեւորումներն այս կամ այն կերպ նկատվում են կրոնափոխված հայերի տարբեր խմբերի եւ սերունդների շրջանում եւս, եւ սրանք էլ հիմք են տալիս շատերին պնդելու, թե կրոնափոխվելուց հետո այդ մարդիկ դադարել են հայ լինել: Սակայն գիտականությունը պահանջում է յուրաքանչյուր նման խմբին մոտենալ յուրովի, քննել հանգամանքների ու իրավիճակի ազդեցությունը նրանց վրա եւ այդ ամենի փոփոխման դեպքում՝ հնարավոր արդյունքները:

Թուրքիայի հայության միջեւ հաստատված խնդրահարույց հարաբերությունները վերջերս համայնքային մի ընտրության արդյունքում ձեռք բերեցին հրապարակային բնույթ: Այսպես, մարտի 22-ին Ստամբուլի Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի ղեկավար կազմի ընտրություններն էին: Հարկ է նշել, որ հիշյալ հիմնադրամը տիրապետում է բավական լայն ֆինանսական միջոցների, եւ բնական է, որ սպասվելու էր լարված պայքար: Եկեղեցու հիմնադրամը երկար տարիներ կառավարել է պոլսահայ համայնքի ներկայացուցիչ Ափիկ Հայրապետյանը, որը 85 տարեկան է եւ այս ընտրություններում կրկին առաջադրել է իր թեկնածությունը: Թեկնածությունն էր առաջադրել նաեւ Սուրադ Բեշթեփեն, որին աջակցում էին Ստամբուլում հաստատված սասունցիները: Նշենք, որ նախընտրական շրջանում արդեն նկատվող լարվածությունն ուղեկցվում էր փոխադարձ մեղադրանքներով, սակայն սասունցիների եւ նրանց թեկնածուի դեմ կիրառվող ամենատարածված հակաքարոզչությունն այն էր, որ նրանք հայախոս չեն, անգամ հայ էլ չեն, այլ քուրդ, եւ պետք չէ եկեղեցին հանձնել քրդերի կառավարմանը: Փաստորեն, տասնամյակներով հրապարակայնորեն չբարձրածայնված մտքերն օգտագործվեցին ընտրական քարոզչությունում: Այս մեթոդի ընտրությունը ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, կա մի զանգված, որի վրա էլ հենց պետք է ազդեցություն թողնեին վերոնշյալ մտքերը: Նախընտրական շրջանում անգամ առաջացան տերմիններ, որոնք միտված էին էլ ավելի խորացնել

առկա անջրպետը. այսպես, հիմնադրամի ղեկավարության համար պայքարող «հին պոլսահայերի» թեև սկսեցին անվանել «սպիտակ հայեր»՝ ըստ երեւույթին փորձելով շեշտել նրանց «ազնվական» ծագումը, իսկ մյուս թեւին տրվեց գավառահայեր անվանումը: «Սպիտակ» եւ գավառացի հայերի բանավեճը լայնորեն արտացոլվեց համայնքային կյանքում եւ առաջ բերեց համակիրների բանակներ, որոնց շրջանակներում էլ շարունակվեց պայքարը: Ավելին՝ Սուրբ Երրորդություն հիմնադրամի ընտրությունների շուրջ բարձրացած աղմուկը դուրս եկավ համայնքային շրջանակներից, որին անդրադարձան նաեւ թուրքական թերթերը:

Մեր անձնական դիտարկումները թույլ են տալիս պնդել, որ այդ ընտրությունների հետեւանքով համայնքում առաջացան երկփեղկված տրամադրություններ: Օրինակ, «Ակօս» շաբաթաթերթը, որն ակտիվորեն լուսաբանում էր հիմնադրամի շուրջ ընթացող զարգացումները եւ քննադատում գավառացի հայ ու պոլսահայ բաժանումները, համայնքի տարբեր անդամների կողմից արժանացավ քննադատության, թե իբր այն խիստ չափազանցված եւ միտումնավոր է ներկայացնում հայության միջեւ եղած անջրպետները եւ հրահրում արհեստական լարվածություն: Ուշագրավ է, որ երկու կողմերն էլ դեմ էին արտահայտվում պոլսահայ-գավառացի հայ խտրական սահմանումներին եւ դա դեմ համարում համայնքի շահերին: Պոլսահայ Արեթ Յամանն իր հոդվածում փոքր-ինչ հռետորական մի հարց է առաջ քաշում, թե ինչու մինչեւ այժմ համայնքում նման վեճեր եւ խտրականություն չեն եղել, իսկ հիմա դա որոշ թերթեր (նկատի ունի «Ակօս»-ը) տիրաժավորում են: Մենք համաձայն չենք հեղինակի հետ, քանի որ այդ խտրական տրամադրությունները միշտ էլ եղել են Պոլսի հայ համայնքի մի հատվածի մեջ, ուղղակի նման հնչեղություն ստացել են ներկայում: Նման խտրական վերաբերմունքի ցայտուն օրինակների կարող ենք հանդիպել տարբեր տարիներին գավառներից Ստամբուլի հայկական դպրոցներ սովորելու եկած հայերի մոտ: Օրինակ, ԱՄՆ-ում հաստատված մալաթիացի մի հայի պատմածը խորությամբ պատկերում է հայության մեջ տարածված խտրականության տարբեր դրսեւորումները: Այսպես, ըստ նրա. «Մեզ Մալաթիայում շրջապատի մուսուլմաններն ասում էին «գյավուր» հայեր, երբ տեղափոխվեցինք Ստամբուլ՝ հայկական դպրոցում, ուր հաճախում էինք, մեր համադասարանցիները մեզ ասում էին «քրդեր»: Տարիներ հետո տեղափոխվեցինք Հայաստան, ուր մեզ անվանում էին «ախպարներ», իսկ ԱՄՆ-ում հաստատվելուց հետո, ի վերջո, մեզ սկսեցին անվանել «հայաստանցիներ»:

Ինչպես իրավացիորեն նշում է «Ակօս»-ի հեղինակներից Ռոբեր Քոփթաշը՝ «ընտրությունները մեզ դեմ հանդիման հանեցին հայ համայնքի

ներսում եռացող խտրականության հետ»: Կրկին ըստ Քուփթաշի, հին ստամբուլաբնակ հայերի կողմից գավառներից համեմատաբար ուշ Ստամբուլ տեղափոխվածներին չընդունելը, բացի դասակարգայինից, ունի նաև կենցաղային պատճառներ, օրինակ՝ նրանց հայերեն չիմանալը, թուրքերենի բարբառային կիրառումը, նույնիսկ հագնվելու ոճը: Այս ամենը պոլսահայության մի շերտի համար շատ կարելու է, քանի որ ըստ տարածված տեսակետի՝ հայերը միայն քաղաքակիրթ, բարձրաշխարհիկ պետք է լինեն, եւ գավառահայերը լուրջ վնաս են հասցնում արդեն ձեւավորված հայի կերպարին: Այստեղից է ծագում նաև նրանց քուրդ անվանելով՝ «իսկական հայի» կերպարը մաքուր պահելու ձգտումը:

Գալով «Ակօս»-ի եւ նրա ընդդիմադիրների վեճին՝ նշենք, որ կրքերն այնքան լարվեցին, որ Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի հին թիմի կողմից բոլորովին վերջերս «Ակօսը» դատի տրվեց: Որպես դրա հիմնավորում նշվում էր թերթի կողմնակալ լուսաբանումը: Հայցող կողմն «Ակօս»-ից պահանջում է ավելի քան 30 000 ԱՄՆ դոլարի փոխհատուցում: Անդրադառնալով այս խնդրին՝ Հրանտ Դինքի եղբայրը՝ Երվանդ Դինքը, հիշեցնում է վերջերս Թուրքիայի նախագահ Աբդուլա Գյուլի հայցն ընդդեմ պատգամավոր Ջանան Արըթմանի, որը նրան մեղադրում էր հայկական ծագում ունենալու մեջ, եւ սարկազմով նշում. «Նույնիսկ նախագահը «պատիվը վիրավորելու» համար բացած դատական հայցում որպես փոխհատուցում պահանջում էր ընդամենը 1 լիրա»: Իրոք, ցավալի է, որ ներհամայնքային վեճն այսպիսի ընթացք է ստանում, սակայն միեւնույն ժամանակ մտահոգիչ է, որ «Ակօս»-ի դեմ դատական հայցով հանդես եկած բացահայտ պանթյուրքիստների, «գորշ գայլերի», ազգայնամուլների, «էրգենոքոն» ահաբեկչական կազմակերպության անդամների շարքին ավելացան նաև մեր ազգակիցները:

Իսկ մարտի 22-ին Ստամբուլում տեղի ունեցած Սուրբ Երրորդություն եկեղեցու հիմնադրամի ընտրությունները եւ դրա արձագանքները շարունակվում են եւ կարծես հակված էլ չեն մարելու, քանզի վերաբերում են ոչ միայն նյութական, այլև ավելի խոր խնդիրների: Գիշտ է, այդ ընտրություններն ավելի ուշ չեղյալ հայտարարվեցին՝ կապված մի շարք հանգամանքների, ապօրինությունների հետ, եւ ներկայումս սպասվում է ավելի լայն՝ համահամայնքային ընտրություն, սակայն խնդիրը բաց է եւ, ինչպես նշում է Երվանդ Դինքը, իրենք այս խնդիրը տեղափոխելու են համահայկական քննարկման, քանի որ դրա տերը եւ որոշում ընդունողը, ի վերջո, հայկական աշխարհն է:

ՌՈՒԽԱՍՏԱՆ – ԹՈՒՐՔԻԱ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՋ
Սարգիս Հարությունյան

Այս տարվա հունիսի սկզբին տեղի ունեցավ Թուրքիայի Գլխավոր սպայակույտի պետ, գեներալ Իլքեր Բաշբուղի երկար սպասված այցելությունը Ռուսաստան: Թեև թուրքական աղբյուրների փոխանցմամբ՝ այցելությունն ուներ կոնկրետ նպատակ, եւ խնդիր կար ռուսական կողմի հետ եզրափակել «Mi-28» ռազմական տասներկու ուղղաթիռների գնման հարցը, բայց, ընդհանուր առմամբ, Բաշբուղի ուղեւորությունը Մոսկվա ավելի շուտ ի ցույց է դնում այն միտումը, թե վերջին տարիներին մեկնարկած ռուս-թուրքական ռազմատեխնիկական համագործակցությունն անցում է կատարում նոր հարթություն:

Անշուշտ, նկատի ունենալով Մոսկվայի ու Անկարայի միջեւ առկա ռազմավարական հակասությունները՝ դժվար թե ռուս-թուրքական ռազմատեխնիկական համագործակցությունը հասնի այն մակարդակին, որը կարող է լինել Թուրքիայի ու Միացյալ Նահանգների կամ Թուրքիայի ու եվրոպական մի շարք երկրների դեպքում: Սակայն ռուս-թուրքական հարաբերություններում ռազմական բաղադրիչի ի հայտ գալը այն ցուցիչն է, որը թույլ է տալիս խոսել երկրների միջեւ ընթացող գործընթացի լրջության մասին: Այլ կերպ ասած, ռուս-թուրքական առեւտրաֆինանսական տպավորիչ հարաբերությունների ֆոնին երկու երկրների միջեւ ռազմատեխնիկական համագործակցության զարգացումը վկայում է, որ թեև Մոսկվայում ու Անկարայում «տեղյակ» են իրենց քաղաքակրթական ու աշխարհաքաղաքական հակասությունների մասին, սակայն երկու մայրաքաղաքներում էլ նպատակ կա ընդլայնել միջազգային-քաղաքական երկուստեք պայմանավորվածությունները: Գեներալ Իլքեր Բաշբուղի այցն անհրաժեշտ է ընկալել հենց այդ համատեքստում:

Հիմնական հարցը, որն առնչվում է այսօրվա ռուս-թուրքական բանակցություններին եւ ուղղակի կապ ունի Հայաստանի ազգային անվտանգության հետ, հետեւյալն է. չնայած Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ գոյություն ունեցող ռազմավարական հակասություններին, ինչքան հեռու կգնան երկու կողմերն իրենց պայմանավորվածություններում:

Իրավիճակային դիտարկում

Առաջիկայում Ռուսաստանն ու Թուրքիան պետք է պայմանավորվածության հանգեն մի շարք կարելու հարցերում, որը եթե իրականություն դառնա, կարող է հիմք նախապատրաստել Հարավային Կովկասի նկատմամբ Ռուսաստանի ու Թուրքիայի համատեղ մոտեցումների ձեւավորման համար. հանգամանք, որն այսօր Անկարայի արտաքին քաղաքական նպատակներից մեկն է:

Չնայած միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական լուրջ ազդեցություն է թողնում Թուրքիայի տնտեսության ու մասնավորապես արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների վրա, եւ այս տարվա առաջին երեք ամիսներին Ռուսաստանի ու Թուրքիայի առևտրաշրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է ավելի քան կիսով չափ՝ 53.2%-ով, սակայն 2008թ. տվյալներով Ռուսաստանը դարձավ Թուրքիայի առևտրատնտեսական թիվ մեկ գործընկերը՝ առաջ անցնելով Գերմանիայից: Նախորդ տարի երկու երկրների միջեւ առևտրաշրջանառությունն աճել է մոտ 50%-ով եւ կազմել \$38 մլրդ: Այդ թիվն էլ ավելի տպավորիչ է դառնում, եթե նկատի ունենանք, որ 2000թ. Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ առևտրաշրջանառությունը կազմում էր \$4.5 մլրդ: Սակայն հարցը միայն թվերի մեջ չէ: Հարկ է նշել, որ ներկայում եւ տեսանելի հեռանկարում ռուսական ուղղությունը եական է լինելու թուրքական տնտեսության համար առանցքային հանդիսացող ճյուղերի համար՝ արդյունաբերական ապրանքների արտահանում, զբոսաշրջություն եւ էներգակիրների ներմուծում (հանգամանք, որն Անկարային չեն կարող ապահովել նրա այլ խոշոր գործընկերները՝ ԱՄՆ-ն ու ԵՄ-ը):

Առաջիկայում նախատեսված է Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի այցելությունը Թուրքիա: Նշենք, որ այցի վերաբերյալ պայմանավորվածությունը ձեռք է բերվել մայիսի 16-ին Սոչիում կայացած Պուտին – Էրդողան հանդիպման ժամանակ, իսկ դա պետք է ընկալել, որ բանակցվող մի շարք հարցերի առնչությամբ երկու ղեկավարների միջեւ կա առնվազն նախնական պայմանավորվածություն, իսկ առանձնացված ժամկետն էլ պետք է օգտագործվի պայմանավորվածությունները վերջնական տեսքի բերելու համար: Ինչեւէ, եթե այցը տեղի ունենա, ապա այն կարող է նշանակել, որ Մոսկվան ու Անկարան վերջնական պայմանավորվածության են հանգել Սոչիում քննարկված կետերի կամ նրանց մի մասի վերաբերյալ:

Առաջին կետը վերաբերում է Թուրքիայի Մերսին քաղաքից ոչ հեռու գտնվող Ակոույու բնակավայրի մոտ հիմնվելիք թուրքական առաջին ԱԷԿ-ի չորս էներգաբլոկների շինարարությանը: Հայտնի է, որ վերջինիս մրցույթն ավարտվել է անցած տարվա սեպտեմբերին. 13 պոտենցիալ մասնակիցներից հայտ էր ներկայացրել ու հաղթող ճանաչվել ռուսական «Атомстройэкспорт», «Интер PAO EЭC» եւ թուրքական «Park Teknik» ընկերություններից կազմված կոնսորցիումը: Սոչիում Էրդողանը հայտարարեց, թե առաջիկա օրերին Թուրքիայի կառավարությունը կավարտի մրցույթի փակման հետ կապված ֆորմալ մասը, ինչը նշանակում էր, թե չորս էներգաբլոկների շինարարության պատվերը պետք է տրվի կոնսորցիումին¹:

Սոչիում հայտնի դարձավ նաեւ, որ Ռուսաստանն ու Թուրքիան քննարկում են վերջինիս տարածքում ռուսական ընկերությունների կողմից ջերմաէլեկտրակայանի կառուցման հարցը, որի գործունեության համար Մոսկվան պատրաստ է Թուրքիա առաքել բնական գազի լրացուցիչ ծավալներ:

Այս տարվա մարտից երկու երկրները բանակցություններ են վարում նաեւ «Голубой поток-2» գազամուղի շինարարության շուրջ: 2008թ. Ռուսաստանը Թուրքիային մատակարարել է 23.8 մլրդ մ³ բնական գազ (այդ թվում 10 մլրդ մ³ 2005-ից գործող «Голубой поток» գազամուղով, որի առավելագույն հզորությունը կազմում է տարեկան 16 մլրդ մ³): Այս տարի այդ թիվը կազմելու է 25.5 մլրդ մ³, եւ այն առաջիկայում միայն աճելու է: Սակայն Ռուսաստանը շահագրգռված է «Голубой поток-2» գազամուղի կառուցմամբ ոչ միայն տնտեսական հաշվարկներից ելնելով: Մոսկվայի համոզմամբ, «Голубой поток-2»-ի կառուցումը եւ գազի գնման հարցում Ադրբեջանի հետ ձեռք բերվելիք պայմանավորվածությունը կարող են մեջտեղից հանել Ռուսաստանը շրջանցող «Nabucco» գազամուղը, որի շինարարությունն անընդհատ հետաձգվում է տարբեր պատճառներով²: Սոչիում Պուտինն ու Էրդողանը քննարկել են «Голубой поток-2»-ը, եւ Ռուսաստանի վարչապետի Թուրքիա կատարելիք այցելության ընթացքում հարցի քննարկումը շարունակվելու է: Կողմերը նաեւ պայմանավորվել են երկարած գել 2011թ. ավարտվող դեռեւս 1986թ. ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի միջեւ կնքված բնական գազի մատակարարման մասին պայմանագիրը, որով Մոսկվան «Ռուսաստան – Ուկրաինա – Ռումինիա – Բուլղարիա – Թուրքիա» գծով տարեկան Անկարային մատակարարում էր 6 մլրդ մ³ գազ:

Եվ վերջապես, հնարավոր է, որ այդ այցելության ընթացքում Պուտինն Անկարայում քննարկի նաեւ թուրքական կողմին հակաօդային պաշտպա-

նության ռուսական «С-400» համալիրների վաճառքի հարցը: Նշենք, որ Անկարային «С-400»-ների հնարավոր վաճառքի մասին ապրիլին Ստամբուլում անցկացվող ռազմական տեխնիկայի «ІDEF-2009» միջազգային ցուցահանդեսում (որն ամեն տարի կազմակերպվում է Թուրքիայի կողմից) հայտարարեց ռուսական պատվիրակության ղեկավար Անատոլի Ակսյոնովը: Արեւմտյան փորձագետների կարծիքով, Ռուսաստանը պարզապես չի կարող Թուրքիային վաճառել գերադրիական հանդիսացող «С-400» համալիրներ, քանի որ այդ պարագայում էապես կտուժի հենց նրա պաշտպանունակությունը³: Մտավախություն կա, թե Թուրքիայի միջոցով ԱՄՆ-ն ու ՆԱՏՕ-ի գծով նրա դաշնակիցները կարող են ծանոթանալ «С-400»-ներում օգտագործվող նորագույն տեխնոլոգիաներին, ինչը նրանց կօգնի սեփական օդուժի համար ստեղծել «С-400»-ը հաղթահարող հնարավորություններ: Նշենք, որ ռուսական «С-400»-ների կողքին Անկարայում քննարկվում է հակաօդային պաշտպանության ամերիկյան «PAC-3» համալիրների գնման հարցը:

Առնչություններ Հայաստանի ազգային անվտանգությանը

Պետք է ենթադրել, որ Ռուսաստանի ու Թուրքիայի միջև ընթացող պայմանավորվածություններն ի վերջո հանգելու են Հարավային Կովկասում համատեղ մոտեցման մշակմանը: Անշուշտ, այդ մոտեցումը չի կարող կրել ռազմավարական բնույթ, սակայն միջնաժամկետ հեռանկարում այդ մոտեցումն ուղղակի երկու կողմին էլ անհրաժեշտ է՝ ռուս-վրացական պատերազմից հետո ստեղծված տարածաշրջանային իրադրությունում սեփական ազդեցությունն ամրապնդելու համար: Այդ խնդիրը Մոսկվան փորձում է լուծել Հայաստանում իր ամուր դիրքերի պահպանման եւ Վրաստանում Սահակաշվիլու վարչակազմի տապալման միջոցով: Թուրքիան տարածաշրջանում ձգտում է ամրապնդվել Ռուսաստանին համագործակցություն առաջարկելով միջազգային-քաղաքական ոլորտում, ինչպես նաեւ ճնշում բանեցնելով Մոսկվայի նկատմամբ՝ Վաշինգտոնի հետ կրկին կարգավորվող իր հարաբերությունների միջոցով⁴: Իր հերթին՝ Ռուսաստանն էլ ձգտում է Թուրքիայի հետ համագործակցության արդյունքում նվազեցնել տարածաշրջանում ամերիկյան ու եվրոպական ներկայությունը, ինչի արդյունքում անցած տարվա երկրորդ կեսին մեջտեղ եկան Էրդողանի «Կովկասյան պլատֆորմը» եւ Մեդվեդեւի միջնորդությունը Ղարաբաղյան հարցում:

Մյուս կողմից, ռուս-թուրքական առեւտրատնտեսական հարաբերությունների ռազմավարական բնույթ ստանալը, ինչպես նաեւ երկուստեք

ռազմատեխնիկական համագործակցության խորացումը նույնպես վկայում են, որ Մոսկվայում ու Անկարայում նպատակ կա միջազգային-քաղաքական ոլորտում եւ մի շարք տարածաշրջանային հարցերում հաստատել փոխադարձաբար ընդունելի գործակցություն: Ի վերջո, նման փոխգործակցությունը կարող է միայն օգնել երկուսին՝ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հետ իրենց հարաբերություններում:

Հայաստանի պարագայում էական է, թե ռուս-թուրքական թեկուզ եւ միջնաժամկետ պայմանավորվածությունն ինչ տեսք կունենա: Եվ այսօր սա է մեր երկրի ազգային անվտանգությանն առնչվող կարելու հարցերից մեկը: Իսկ որ գործընթացը Մոսկվայի ու Անկարայի միջեւ շարունակվում է, ու հետեւաբար՝ մենք դեռ կարող ենք նորությունների ականատես լինել, կասկածից վեր է:

¹ Կոնսորցիումը հիմնելու է ռուսական «BBՅՔ-1200» տեսակի չորս ռեակտորներ, որոնք բոլորը միասին տարեկան կարող են արտադրել 4 800 մվտ էլեկտրաէներգիա: ԱԷԿ-ի կառուցումը կարժենա \$7.5 մլրդ: Նախատեսվում է որ այն պետք է պատրաստ լինի 2012թ.: 15 տարվա ընթացքում Թուրքիան պարտավորվում է կոնսորցիումից գնել 415.5 մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա՝ վճարելով \$86.3 մլրդ:

² Հիմնական պատճառները երեքն են՝ անհրաժեշտ ֆինանսների բացակայությունը, Ալիե-կրտսերի վարչակազմի միաժամանակյա բանակցությունները ռուսական ու արեւմտյան կողմերի հետ, թե ում պետք է վաճառի «Շահ Դենիզ» հանքավայրի գազը, եւ երրորդ՝ Թուրքիայի հարուցած խոչընդոտները. թուրքերը ցանկանում են իրենց տարածքով անցնող ողջ բնական գազի 15%-ը ձեռք բերել իջեցված գներով, ինչին դեմ են հատկապես Բաքվում:

³ Ներկայում ռուսական զինված ուժերի տրամադրության ներքո եղած «C-400»-ները գործում են միայն Մոսկվայի ռազմական շրջանում: Մյուս շրջանները դեռ չեն հասցրել ստանալ այդ նորագույն համալիրները:

⁴ Օրինակ, արեւմտյան աղբյուրների ներկայացմամբ, Սոչիում Էրդողանը փորձել է ճնշում գործադրել Պուտինի նկատմամբ՝ նրան ներկայացնելով Թուրքիայում ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգերի տեղակայման հեռանկարը: Հայտնի է, որ այդ հարցում Վաշինգտոնում նպատակ ունեն չսահմանափակվել Լեհաստանով ու Չեխիայով:

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՆԱՏՕ–ԱԴՐԲԵՋԱՆ ՉԱՍԱԳՈՐԾ ԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ Կարեն Վերանյան

Միջազգային զարգացումների համատեքստը

2008թ. օգոստոսի վրաց-ռուսական պատերազմը մեծապես պայմանավորեց Հարավային Կովկասի ռազմաքաղաքական առաջիկա գործընթացների ընդհանուր տրամաբանությունը: Արդյունքում՝ որոշակիորեն վերածեւակերպվեցին նաեւ տարածաշրջանում ներգրավված արտաքին եւ առաջին հերթին արեւմտյան դերակատարների նախկին պատկերացումներն ու տեսլականները Հարավային Կովկասի ռազմաքաղաքական անվտանգության վերաբերյալ: Փորձագետներից շատերն են կիսում այն տեսակետը, ըստ որի՝ հնգօրյա պատերազմում Վրաստանի կրած պարտությամբ տարածաշրջանում որոշակիորեն թուլացան նախեւառաջ ՆԱՏՕ դիրքերը, որը ջանք չէր խնայում իր շարքերում հնարավորինս շուտ տեսնելու հարավկովկասյան այդ հանրապետությունը: Հյուսիսատլանտյան դաշինքը, որ վերջին ամիսներին կտրուկ ակտիվացրել է ներգրավվածությունը Հարավային Կովկասում (լայնածավալ ու երկարաժամկետ զորավարժությունների անցկացում, խորհրդակցությունների, տարբեր միջոցառումների ու գիտաժողովների կազմակերպում եւ այլն), նպատակ է հետապնդում պաշտոնական Մոսկվային ցուցադրել իր շահերը մեր տարածաշրջանում եւ դրանք պաշտպանելու պատրաստակամությունն ու հնարավորությունները:

Մյուս կողմից, տարածաշրջանում ՆԱՏՕ ակտիվացման շարժառիթներից մեկը օգոստոսյան դեպքերից հետո ԱՊՀ տարածքում ու մասնավորաբար Հարավային Կովկասում Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդումն է: Դաշինքի ղեկավար շրջանակներում անհանգստացած են հատկապես ՀԱՊԿ ակտիվացումից:

2008թ. սեպտեմբերի վերջին Հայաստանում մեկնարկեց ՀԱՊԿ խորհրդարանական ասամբլեայի մշտական հանձնաժողովի արտագնա նիստը, որտեղ խոսվեց ՀԱՊԿ-ի՝ բազմագործառույթային կառույցի վերածվելու ծրագրերի մասին: Հանդիպմանը հաջորդեց 2008թ. նոյեմբերին կրկին Երեւանում կայացած ՀԱՊԿ անդամ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի նիստը: Կազմակերպության գլխավոր քարտու-

ղար Նիկոլայ Բորոյուժան շեշտեց «Եվրոպայում անվտանգության նոր համապարփակ պայմանագրի» ստորագրման կարելուրության եւ այդ ուղղությամբ ՀԱՊԿ անդամ երկրների միջեւ խորհրդակցությունների շարունակականության անհրաժեշտության մասին:

2008թ. դեկտեմբերին Ղազախստանում ՀԱՊԿ ոչ պաշտոնական գագաթաժողովում ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ 2009թ. փետրվարի 4-ին Մոսկվայում որոշում ընդունվեց ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժեր ստեղծելու մասին պայմանագրի ստորագրման վերաբերյալ:

Ա.թ. հունիսի 14-ին, Մոսկվայում, Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի եւ Ուզբեկստանի նախագահները ստորագրեցին ՀԱՊԿ արագ արձագանքման հավաքական ուժերի մասին համաձայնագիրը եւ կից փաստաթղթերը, որոնք սահմանում են այդ ուժերի կարգավիճակը, կազմը, ձեւավորման ու գործունեության կարգը, կիրառության կանոնները:

ՆԱՏՕ – Ադրբեջան համագործակցության խորացումը

Խնդրի առնչությամբ անհրաժեշտ է արձանագրել եւս մեկ կարելուր հանգամանք. օգոստոսյան իրադարձություններով արեւմտյան հանրության շրջանում զգալիորեն ընկավ Վրաստանի գործող ղեկավարության հեղինակությունը, իսկ Միացյալ Նահանգների ու Եվրոպական ընտանիքի կողմից Վրաստանին ուղղված հետպատերազմյան աջակցության շարունակությունը կրում էր ցուցադրական եւ հակառուսական բնույթ: Ռուսաստանի հետ ռազմական առճակատումը բացասական ազդեցություն ունեցավ եվրաստլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման եւ հատկապես Վրաստան – ՆԱՏՕ համագործակցության ընդլայնման հեռանկարների վրա: Արդյունքում՝ ոչ միայն հետաձգվեց Հյուսիսատլանտյան դաշինքին նրա անդամակցության հարցը, այլեւ երկրի արտաքին ու ներքին զարգացումներում խորացող անկայունության հետեւանքով Բրյուսելում սկսեցին խոսել կարճաժամկետ ու միջնաժամկետ հեռանկարում Վրաստանի անդամակցության նպատակահարմարության մասին առհասարակ: Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարությունը, ի հակակշիռ տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության, սկսեց համագործակցության խորացման նոր ուղիներ փնտրել՝ ի դեմս Ադրբեջանի, որն օգոստոսյան դեպքերից հետո սկսեց դիտվել որպես ՆԱՏՕ անդամակցության հավանական թեկնածու:

Մեր տարածաշրջանում Հյուսիսատլանտյան դաշինքի մարտավարության փոփոխության տրամաբանության մաս են կազմում վերջին երկու ամիսներին նկատվող ՆԱՏՕ–Ադրբեջան համագործակցության խորացման միտումները: Ապրիլի 18-ին Ադրբեջանում, ՆԱՏՕ շրջանակներում, մեկնարկեցին դաշինքի անդամ երկրների ու Ադրբեջանի համատեղ ութօրյա զորավարժությունները, որոնց հակառուսական ուղղվածությունը փորձագետներից շատերի կողմից կասկածի տակ չէր դրվում: Այս առումով բավական խորհրդանշական էր նաեւ զորավարժությունների խորագիրը՝ «Տարածաշրջանային պատասխան–2009թ.»: Այդ զորավարժություններին զուգահեռ, կրկին Ադրբեջանում, տեղի ունեցան փորձագիտական խորհրդակցություններ՝ Հյուսիսատլանտյան դաշինքին հարավկովկասյան այս հանրապետության անդամակցության հարցերի քննարկման նպատակով: Մայիսի սկզբներին Բաքվում կայացավ դաշինքի հետ Ադրբեջանի համագործակցության 15-ամյակին նվիրված «ՆԱՏՕ-Ադրբեջան. հայացք դեպի ապագան՝ անցյալի զնահատումով» խորագիրը կրող գիտաժողովը, որը կազմակերպվել էր բավական մեծ շուքով եւ որին տրվել էր մեծ հնչեղություն: Իսկ մայիսի 6-7-ին Բաքվում ադրբեջանական ՋՈւ ներկայացուցիչներն Ադրբեջանի ու ԱՄՆ-ի միջեւ ստորագրված երկկողմանի ռազմական համագործակցության ծրագրի շրջանակներում մասնակցեցին երկկողմ համագործակցության ծրագրման հարցերին նվիրված գիտաժողովին, որտեղ անդրադարձ եղավ նաեւ Ադրբեջան-ՆԱՏՕ հարաբերությունների հեռանկարներին:

Հյուսիսատլանտյան դաշինքում մեծ կարեւորություն էր տրվում Վրաստանում մայիսի 6-ին մեկնարկած ՆԱՏՕ երկփուլ «Համատեղ աղեղ/համատեղ նիզակակիր–2009թ.» զորավարժություններին, դրանցում Ադրբեջանի մասնակցությանը, ինչի մասին զորավարժությունների նախաշեմին քանիցս ակնարկվեց դաշինքի ղեկավար շրջանակներում: Աննախադեպ ուսումնավարժանքներին, որոնք տեւեցին մինչեւ հունիսի 1-ը, չնայած ռուսական կողմի բացահայտ ճնշումներին, ադրբեջանական կողմն ի սկզբանե մասնակցության ցանկություն էր հայտնել (մասնակցությունից հրաժարվեցին Ղազախստանը, Լատվիան, Էստոնիան, Մոլդովան, Սերբիան եւ Հայաստանը):

Հյուսիսատլանտյան դաշինքի հերթական «մեսիջն» ադրբեջանական կողմին չհապաղեց, երբ Վրաստանում հունիսի 1-ին ավարտված զորավարժություններից անմիջապես հետո ՆԱՏՕ միացյալ ուժերի հրամանատարության քաղաքական խորհրդական Ալեքսիս Վախլասը հանդես եկավ հայտարարությամբ, որ Ադրբեջանը ներկայում դաշինքին անդամակցելու

ավելի մեծ հնարավորություններ ունի, քան Վրաստանը կամ Ուկրաինան: Ինչպես նշվում է հաղորդագրությունում, «նախկինում ծրագրվում էր, որ Հարավային Կովկասի երկրներից Հյուսիսատլանտյան դաշինքին առաջինը կանդամակցի Վրաստանը, որին կհետևի Ադրբեջանը, սակայն իրավիճակը փոխվեց, եւ ներկայում առավել մեծ շանսեր ունի Ադրբեջանը»: Նրա խոսքերով, ի տարբերություն Վրաստանի եւ Ուկրաինայի, որոնց ներքին ու արտաքին քաղաքական զարգացումները բավական անկայուն են, Ադրբեջանի պարագայում «գործ ունենք կայունության հետ»:

Ադրբեջանի համաձայն, ՆԱՏՕ բարձրագույն ղեկավար շրջանակներում Ադրբեջանի հնարավոր անդամակցության հարցում զգալիորեն կարելու է ներկու առանցքային հանգամանք.

❖ Ադրբեջանը եղբայրական հարաբերություններ ունի ՆԱՏՕ կարելու անդամներից մեկի՝ Թուրքիայի հետ, ինչը նաեւ կնպաստի կազմակերպությանը հարավկովկասյան այդ երկրի՝ առանց էական բարդությունների ինտեգրմանն ու հնարավոր անդամակցմանը: ՆԱՏՕ բարձրագույն ղեկավարությունում Ադրբեջանի անդամակցության հարցի ջատագովներն են Թուրքիայի, Ռումինիայի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի ու բալթյան երկրների ներկայացուցիչները: Այս երկրների պատվիրակներն այսօր այնքան են շահագրգռված Ադրբեջանի հետ համագործակցության խորացմամբ, որ աչք են փակում նույնիսկ Ադրբեջանի ժողովրդավարացման գործընթացում տեղ գտած լուրջ ձախողումների վրա. օրինակ, այն բանի վրա, որ մարտի 18-ին նշանակված սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու մասին հանրաքվեի արդյունքով վերացվեց նախագահի պաշտոնում նույն անձի՝ երկու ժամկետից ավելի վերընտրվելու սահմանափակումը:

❖ Մեծ նշանակություն է տրվում դեպի Եվրոպա էներգետիկ ռեսուրսների մատակարարման հարցում Ադրբեջանի դերակատարմանը («Նաբուկկո» եւ Թուրքիա – Հունաստան – Իտալիա գազամուղներ): Կենտրոնական Ասիայից ու Կասպյան ավազանից էներգետիկ ռեսուրսները եւ առաջին հերթին բնական գազը դեպի Եվրոպա (Ռուսաստանը շրջանցելով) ուղղորդելու գործում զգալիորեն կարելու է ադրբեջանական գործոնը: Փորձեր են արվում (հիմնականում՝ արեւմտյան էներգետիկ կազմակերպությունների կողմից պատրաստվող զեկույցների միջոցով) ակտիվ շրջանառության մեջ դնել այն մոտեցումը, թե Կասպյան ավազանի՝ որպես գազի մատակարարման կարելու ազույն հանգույցի ռազմավարական հարցադրումը բխում է Ադրբեջանի արտահանական կարողությունների զարգացումից ու դեպի Եվրոպա

մատակարարման հնարավորություններից: Կասպյան ավազանի գազի պաշարների շահագործման ու արդյունահանման խնդիրը մեծապես պայմանավորվում է ադրբեջանական «Շահ Դենիզ» հանքավայրի շահագործման երկրորդ փուլի ու նրա հնարավորությունների զարգացմամբ:

Հունիսի 10-11-ին Ադրբեջանի ԱԳՆ ու ՆԱՏՕ համատեղ ջանքերով Բաքվում անցկացվեց Եվրաստլանտյան գործընկերության խորհրդի գիտաժողով՝ նվիրված էներգետիկ անվտանգության հիմնախնդիրներին, որտեղ, ինչպես եւ ենթադրվում էր, առանցքային նշանակություն տրվեց ադրբեջանական գործոնին: «Էներգետիկ անվտանգություն. մարտահրավերներ ու նոր հնարավորություններ» գիտաժողովում հանդես եկավ նաեւ աշխատանքային այցով Բաքվում գտնվող Ռուսիայի ռազմավարական հարցերով պետնախարար Բոգդան Աուրեսկուն: Վերջինիս խոսքերով, ՆԱՏՕ էներգետիկ անվտանգության քաղաքականությունում առանձնապես կարեւորվում են միջազգային էներգետիկ անվտանգության հարցերում Ադրբեջանի ունեցած ներդրումն ու դերակատարումը:

Գիտաժողովի կազմակերպումն իրականացվում է Բաքվում ՆԱՏՕ հերթական նախաձեռնության՝ հունիսի 10–26-ն անցկացվող «ՆԱՏՕ-ի շաբաթ» միջոցառման շրջանակներում, որը ենթադրում է նաեւ այլ սեմինարների ու աշխատանքային-խորհրդակցական հանդիպումների կազմակերպում:

Ադրբեջանի դիրքորոշումը

Վերջին ժամանակներս Հյուսիսատլանտյան դաշինքի՝ Ադրբեջանին հասցեագրած «մեսիջները», սակայն, միանշանակ չեն ընկալվում վերջինիս ղեկավարության կողմից: Իլհամ Ալիևը զգուշավոր դիրքորոշում է ցուցաբերում Ադրբեջան–ՆԱՏՕ համագործակցության խորացման հարցերում՝ ձգտելով հնարավորինս հավասարակշռել արտաքին հիմնական դերակատարների շահերն ու ազդեցությունը: Այնուհանդերձ, փաստենք, որ չնայած Ռուսաստանի խիստ քննադատություններին՝ պայմանավորված ս.թ. մայիսի 6-ին Վրաստանում մեկնարկած ՆԱՏՕ զորավարություններով եւ ռուսական կողմի կոչերին՝ չմասնակցել դրանց, ադրբեջանական կողմը տեղի չտվեց Մոսկվայի ճնշումներին եւ մասնակցեց զորավարություններին: Տեղին է հիշատակել մինչ այդ՝ ապրիլի 29-ին Իլհամ Ալիևի աշխատանքային այցը ՆԱՏՕ նստավայր Բրյուսել, որտեղ վերջինս ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Յասպ Դե Հոոպ

Սխեմների կողմից արժանացավ բավական ջերմ ընդունելության, քննարկվեցին Ադրբեջան–ՆԱՏՕ համագործակցության ընդլայնմանը վերաբերող հարցեր:

Չպետք է անտեսել եւ այն, որ Հյուսիսատլանտյան դաշինքի հետ Ադրբեջանի համագործակցության խորացման ներկա միտումները պայմանավորված են նաեւ ՀԱՊԿ ռազմաքաղաքական ակտիվացմամբ, մասնավորապես՝ նրա կազմում արագ արձագանքման ուժերի ստեղծման նախաձեռնությամբ. Ադրբեջանը ՀԱՊԿ անդամ չէ եւ դրա նոր կառույցի ստեղծման հետ կապված քանիցս մտահոգություն է հայտնել:

Նշենք նաեւ, որ Հարավային Կովկասում ՆԱՏՕ նախաձեռնություններին զուգահեռ՝ ադրբեջանական կողմը պաշտոնապես մի քանի անգամ հանդես եկավ հայտարարություններով, որոնք կոչված էին մեղմելու պաշտոնական Մոսկվայի վրդովմունքը: Տեղին է անդրադառնալ Բաքվում կայացած «ՆԱՏՕ–Ադրբեջան. հայացք դեպի ապագան՝ անցյալի գնահատումով» գիտաժողովին Ադրբեջանի փոխարտգործնախարար Արագ Ազիմովի հայտարարությունը, թե Ադրբեջան–ՆԱՏՕ համագործակցության խորացումը եւ վերջինիս Ադրբեջանի հնարավոր անդամակցումը չբացառելը «չի կարող ապահովել երկրի լիարժեք անվտանգությունը», եւ որ առկա են «համապատասխան հանգամանքներ»: Ռուսական կողմի մտահոգություններն ի չիք դարձնելուն էր ուղղված նաեւ ս.թ. ապրիլի 16-ին Իլհամ Ալիևի մոսկովյան երկօրյա պաշտոնական այցը, որը փաստորեն տեղի ունեցավ Ադրբեջանում ապրիլի 18-ին մեկնարկած ՆԱՏՕ զորավարժությունների նախաշեմին:

Հետևություններ

Չնայած վերջին ամիսներին ՆԱՏՕ-ի հետ Ադրբեջանի համագործակցության ընդլայնման միտումներին ու կազմակերպությանը նրա անդամակցման մասին խոսակցությունների ակտուալացմանը, այնուամենայնիվ, կարճաժամկետ հեռանկարում ադրբեջանական կողմը զերծ կմնա Հյուսիսատլանտյան դաշինքի հետ համագործակցության խորացումից՝ ի հաշիվ ռուս-ադրբեջանական հարաբերությունների՝ երկու հիմնական պատճառներից ելնելով.

❖ վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմը ցույց տվեց, որ եվրատլանտյան կառույցները չեն կարող ապահովել Հարավային Կովկասի ու նրա առանձին երկրների լիարժեք անվտանգությունը կամ

կարգավորել ազգամիջյան հակամարտությունները՝ հաշվի չառնելով տարածաշրջանում ներգրավված այլ արտաքին շահերը:

❖ Բաքվի իշխանությունները հստակ գիտակցում են, որ Ադրբեյջանի արտաքին քաղաքականությունում եվրաստլանտյան վեկտորի՝ «որոշակի սահմաններից դուրս» ուժեղացումը կնպաստի Հայաստանի հետ Ռուսաստանի համագործակցության է՛լ ավելի սերտացմանը, ինչը կարող է ադրբեյջանական կողմի համար լուրջ խնդիրներ առաջ բերել այդ թվում եւ Ղարաբաղյան հիմնախնդրի հետագա կարգավորման գործընթացում:

Կարելի է սպասել, որ Ադրբեյջանի շուրջ արտաքին շահերի կենտրոնացման արդյունքում ադրբեյջանական կողմը կփորձի օգտագործել ստեղծված իրավիճակը՝ հնարավորինս մեծ օգուտներ կորզելու երկու հակառակ բեւեռներից: Սակայն, միեւնույն ժամանակ, արտաքին շահերի գերկենտրոնացումը Ադրբեյջանի շուրջ եւ դրանց անհամատեղելիությունը այս երկիրը կդարձնեն առավել խոցելի, կթուլացնեն նրա դիմակայությունն արտաքին ճնշումների նկատմամբ:

ՀԱՅ-ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Արաքս Փաշայան

1990-ականների սկզբներից ի վեր Աղրբեջանը միջազգային, այդ թվում՝ իսլամական շրջանակներում ձեռնամուխ եղավ ակտիվ քարոզչության՝ ձգտելով Ղարաբաղյան հարցը լուծել հոգուտ իրեն: Ի թիվս այլ կոմունների՝ Աղրբեջանը ձգտում էր իսլամական համերաշխության գաղափարն օգտագործել մուսուլմանական պետությունների, մասնավորապես իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) աջակցությունը ձեռք բերելու համար:

Մասնավորապես Թուրքիայի գործուն միջամտությամբ հայ-աղրբեջանական հակամարտության թեման 1992-ից՝ Ստամբուլի կոնֆերանսից ի վեր դարձավ ԻԿԿ քաղաքական օրակարգի բաղկացուցիչը, իսկ Աղրբեջանն անդամակցեց միջազգային կրոնաքաղաքական այս կառույցին: Հայ-աղրբեջանական հակամարտության թեման տեղ է գտել ոչ միայն ԻԿԿ պետությունների ղեկավարների գագաթաժողովներում եւ արտգործնախարարների կոնֆերանսներում, այլեւ կազմակերպության ամենատարբեր ձեւաչափերում:

Իսլամական կոնֆերանսը, որպես կանոն, Հայաստանին խստորեն դատապարտել է իբրեւ «ագրեսոր», Աղրբեջանի նկատմամբ տարածքային հավակնություններ ունեցող եւ Աղրբեջանի մշակութային արժեքներն ու ռեսուրսները ոչնչացնող մի երկիր եւ պահանջել, որպեսզի Հայաստանն առանց վերապահումների վերադարձնի Լեռնային Ղարաբաղը, «գրավյալ» բոլոր շրջանները, իրականացնի խնդրի վերաբերյալ ՄԱԿ բանաձեւերը: Իսլամական կոնֆերանսը «գրավյալ» տարածքներում աղրբեջանցի ազգաբնակչության դեմ գործողությունները որակել է իբրեւ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եւ կոչ արել իսլամական պետություններին ու միջազգային հանրությանը՝ «օգտագործել քաղաքական եւ տնտեսական ազդեցիկ միջոցներ՝ վերջ դնելու հայկական ագրեսիային եւ աղրբեջանական տարածքների բռնազավթմանը», զերծ մնալ Հայաստանին զինուժ եւ սպառազինութ-

յուններ կամ այդ նպատակով՝ տրանզիտային տարածք տրամադրելուց, որպեսզի վերջինս հնարավորություն չունենա ընդլայնել հակամարտությունը:

Հատկանշական է, որ Ադրբեջանը մշտապես կարողանում է իսլամական ֆորումները լավագույնս օգտագործել սեփական քարոզչության եւ Ղարաբաղյան խնդրին հնչեղություն տալու համար: Անգամ 2006թ. սեպտեմբերին Բաքվում ԻԿԿ տուրիզմի նախարարների հանդիպման ժամանակ Ադրբեջանը որոշեց բարձրացնել հայ-ադրբեջանական հակամարտության հարցը:

Միայն վերջին մեկ ամսվա ընթացքում տեղի ունեցան ԻԿԿ երկու կարեւոր հանդիպումներ, որտեղ հերթական անգամ հայ-ադրբեջանական թեման դարձավ քննարկման առարկա: Դրանք, սակայն, որեւէ նոր բան չավելացրին Հայաստանի նկատմամբ որդեգրված նախկին դիրքորոշման մեջ, այլ ի հայտ բերեցին գոյություն ունեցող իրողությունները՝ մեկ անգամ եւս շեշտադրելով, որ Ադրբեջանը շարունակում է խնդրի հարցում ակնկալել իսլամական աշխարհի աջակցությունը:

ԻԿԿ հանդիպումներից մեկը ս.թ. ապրիլի 21-22-ը Բաքվում տեղի ունեցած իսլամական պետությունների իրավապահ մարմինների ղեկավարների կոնֆերանսն էր, որը նվիրված էր վերագոյալին կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարին:

Հատկանշական է, որ հանդիպմանը, խոսելով միջազգային բնույթի տարբեր հանցագործությունների եւ ահաբեկչության մասին, Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը նշեց, որ իր երկիրը որքան ժամանակ է՝ «տառապում է հարեւան Հայաստանի ագրեսիայից, որը գրավյալ ադրբեջանական հողերում ստեղծել է չվերահսկվող տարածքներ, որտեղ ծաղկում են ապրում թմրաբիզնեսը, ապօրինի զենքի վաճառքը, փողերի լվացումը»: Նրա կարծիքով՝ «հանցագործությունները, որ կատարվում են այդ շրջաններում, սպառնալիք են ոչ միայն Ադրբեջանի, այլեւ ողջ տարածաշրջանի համար»՝ այդ տեսանկյունից նույնպես հիմնավորելով իսլամական պետությունների համագործակցության անհրաժեշտությունը ոչ միայն տարածաշրջանային, այլեւ՝ աշխարհի մակարդակով:

Բաքվի հանդիպման արդյունքների ամփոփմանը նվիրված մամուլի ասուլիսում ԻԿԿ գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով տեղակալ Իզզեթ Քամալ Մուֆթին նշեց, որ եթե լինեն ԻԿԿ անդամ պետություններ, որոնք ընդառաջ չզման պաշտոնական երեւանի հետ չհամագործակցելու ԻԿԿ որոշմանը, ապա կազմակերպությունը պետք է ճնշում գործադրի այդ երկրների վրա: Նման դիտարկումն, իհարկե,

այնքան էլ իրատեսական չէ, եթե հաշվի առնենք, որ ԻԿԿ մի շարք հանդիպումներից հետո Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարել են, թե իսլամական պետություններն այլևս դադարեցնելու են Չայաստանի հետ իրենց շփումները:

ԻԿԿ հաջորդ հանդիպումը վերաբերում է արտաքին գործերի նախարարների 36-րդ կոնֆերանսին, որը տեղի ունեցավ ս.թ. մայիսի 23-25-ը Ղանասկոսում, ուր ընդունվեց 24 կետից կազմված «Չայաստանի Չանրապետության ագրեսիան Ադրբեջանի Չանրապետության դեմ» բանաձեռ, որը կրկնում էր ԻԿԿ նախորդ որոշումները, շեշտադրում խնդրի կարգավորման ուղղությամբ Չայաստանի ոչ կառուցողական դիրքորոշումը: Սակայն հյուրընկալող երկրի նախագահ Բաշար Ալ-Ասադն իր ելույթում իսլամական աշխարհի առաջ ծառայած խնդիրների մասին խոսելիս հայ-ադրբեջանական հակամարտության թեմային չանդրադարձավ: Չատկանշական է, որ այլ իսլամական խնդիրների մասին խոսելիս հայ-ադրբեջանական թեմային չանդրադարձավ նաեւ ԻԿԿ գլխավոր քարտուղար Էքմեղլուդին Իսհանօղլուն, ով աջակցում է ադրբեջանական քարոզչությանը: Ի դեպ, մեկ անգամ չէ, որ իսլամական աշխարհի առաջնորդները շրջանցում են Ղարաբաղյան խնդիրը, ինչը փաստում է, որ ադրբեջանական «գրավյալ» տարածքների հարցն իսլամական աշխարհում չունի լայն հնչեղություն:

Չատկանշական է, որ իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, պարբերաբար անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտությանը, դրա կարգավորման ուղղությամբ որեւէ ծրագիր առաջ չի քաշել կամ որեւէ կառուցողական քայլ չի արել, չնայած որ կողմ է խնդիրը բանակցային ճանապարհով, ԵԱՀԿ շրջանակներում կարգավորելու գաղափարին: Անհասկանալի է, թե ինչու հակամարտության խաղաղ կարգավորման պարագայում՝ որպես զիջումներ անող միակ կողմ դիտարկվում է Չայաստանը, որն անհապաղ պետք է դուրս գա բոլոր «գրավյալ» տարածքներից: Ի դեպ, Լեռնային Ղարաբաղը երբեւէ չի հիշատակվում որպես հակամարտող կողմ, իսկ նրա իշխանությունները, որ ձեւավորվել են ընտրությունների արդյունքում, համարվում են «ոչ լեգիտիմ» եւ «հանցագործ»:

Խորամուխ չլինելով հարցի էության մեջ՝ անդամ երկրները քվեարկում են Ադրբեջանի եւ նրա համախոհ երկրների կազմած՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը շեշտող նախագծերի օգտին՝ առանց հաշվի առնելու, թե որքանով են դրանք նպաստում Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը:

Կարելի է ասել, որ հայ-ադրբեջանական հակամարտության պարագայում իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը բացառապես առաջնորդվում է իսլամական համերաշխության սկզբունքով: Այս պարագայում, բնականաբար, անհնար է վստահել ԻԿԿ-ին՝ որպես անաչառ կառույցի, մինչդեռ վերջինս, օգտագործելով իր միջազգային հեղինակությունը, կարող էր որեւէ ձեւով նպաստել խնդրի կարգավորմանը: Եվ վերջապես, իսլամական պետությունները պետք է գիտակցեն, որ արաբական իսլամական աշխարհի համար կարելուր նշանակություն ունեցող Պաղեստինյան խնդրի եւ Ղարաբաղյան հարցի միջեւ շատ ընդհանրություններ կան, որ դրանք երկուսն էլ առնչվում են ազգերի ինքնորոշման սկզբունքին:

Միեւնույն ժամանակ, հարց է առաջանում, թե որքան է անվիճարկելի ԻԿԿ հեղինակությունն իսլամական աշխարհում, եւ որքանով է իրատեսական Հայաստանի նկատմամբ ԻԿԿ-ի կողմից քաղաքական եւ տնտեսական պատժամիջոցների իրականացումը:

Պետք է նշել, որ ԻԿԿ-ին շատ դեպքերում չի հաջողվել եւ չի հաջողվում հասնել իսլամական հիմնախնդիրների կարգավորմանը, քանի որ տարբեր են իսլամական պետությունների աշխարհաքաղաքական հետաքրքրություններն ու շահերը: Փաստ է, որ ԻԿԿ-ն չունի գործուն մեխանիզմներ եւ համապատասխան ռեսուրսներ իր որոշումներն իրականացնելու համար, այդ իսկ պատճառով դրանք շատ դեպքերում մնում են թղթի վրա: Բացի այդ, ԻԿԿ որոշումներն իրավական առումով պարտադիր չեն անդամ պետությունների համար:

Պետք է նշել, որ հայ-ադրբեջանական հակամարտության վերաբերյալ ԻԿԿ որոշումները հիմնականում քարոզչական բնույթ են կրում: Իսլամական աշխարհի աջակցությունն Ադրբեջանին առաջին հերթին արտահայտվում է ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությանն առնչվող բանաձեւերը հօգուտ Ադրբեջանի քվեարկելու հանգամանքով, Ադրբեջանին ԻԿԿ-ի կողմից տրամադրվող նյութական եւ բարոյական աջակցությամբ:

Իսլամական այլ պետությունների համեմատ՝ Ադրբեջանի համագործակցությունն ԻԿԿ-ի հետ անմախադեպ մեծ չափեր է ընդունել: Գրեթե ամեն տարի Բաքվում տեղի են ունենում ԻԿԿ տարբեր ձեւաչափի հանդիպումներ: Նման ակտիվություն ԻԿԿ-ում ցուցաբերում են բացառիկ պետություններ: Պատահական չէ, որ Ադրբեջանի նախագահ Ի.Ալիևը, որպես կանոն, ընդգծում է ԻԿԿ աջակցությունն Ադրբեջանին, ինչը, ըստ նրա, կօգնի միջազգային ասպարեզում իր երկրին հուզող հարցերն առաջ

քաշելու համար: Ակնհայտ է, որ Ադրբեջանի հեղինակությունն իսլամական աշխարհում զգալիորեն աճել է:

Այսօր Չայաստանն ԻԿԿ բազմաթիվ անդամ պետությունների հետ ունի բարեկամական հարաբերություններ, որոնց հետ համագործակցում է ամենատարբեր ոլորտներում: Սակայն կան նաեւ արմատական դիրքորոշում ունեցող պետություններ, ինչպես, օրինակ՝ Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Պակիստանը, Բանգլադեշը, որոնք հրաժարվում են Չայաստանի հետ հարաբերություններ հաստատել՝ պատճառ բերելով Ղարաբաղյան հակամարտությունը: Սակայն փաստը մնում է փաստ, որ ԻԿԿ-ում Չայաստանի դեմ կազմված բանաձեւերի օգտին քվեարկում են անգամ Չայաստանի բարեկամ երկրները, ինչը թերեւս պետք է դիտարկել միջազգային իսլամական հարթության մեջ: Այդ իսկ պատճառով Չայաստանի արտաքին քաղաքականության ջանքերն առավել արդյունավետ ձեւով պետք է ուղղորդել իսլամական աշխարհում ադրբեջանական քարոզչության չեզոքացմանը:

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ Սեւակ Սարուխանյան

Հունիսի 12-ին Իրանում կայացած հերթական նախագահական ընտրությունները, որոնց արդյունքում նախագահի պաշտոնում վերընտրվեց Մ.Ահմադինեժադը: Հոդվածում անդրադարձ է կատարվում նախընտրական եւ հետընտրական գործընթացներին, փորձ է արվում մատնանշել այն հիմնական զարգացումները, որոնք կարող են տեղ գտնել Իրանում:

Նախընտրական պայքարը

Հունիսի 12-ին նախորդած ընտրապայքարն Իրանում աչքի ընկավ որոշ առանձնահատկություններով: Դրանցից, գուցե, ամենակարեւորն այն էր, որ Իրանի ներքին քաղաքականություն «վերադարձան» բարեփոխիչները: Վերջին նախագահական եւ խորհրդարանական ընտրություններում հիմնական պայքարն ընթանում էր պահպանողականների տարբեր թեւերի միջեւ, իսկ բարեփոխիչների հիմնական քաղաքական նպատակն էր դարձել պետական կառավարման համակարգում սեփական մասնակցությունը պահպանելը:

Բարեփոխիչների «վերադարձն» ակտիվ քաղաքականություն հիմնականում կարելի է պայմանավորել երկու հիմնական հանգամանքով.

1. Բուն պահպանողականները նախագահական ընտրություններ դուրս եկան մեկ հիմնական թեկնածուով՝ Մ.Ահմադինեժադով: Նրա հնարավոր քաղաքական հակառակորդները պահպանողականների դաշտից (խոսքն, առաջին հերթին, Իրանի մեջլիսի նախագահ Լարիջանիի եւ Թեհրանի քաղաքապետ Քալիբաֆի մասին է, որոնք կարող էին լուրջ մրցակցություն ստեղծել գործող նախագահին) չմասնակցեցին ընտրություններին: Այս պայմաններում նախագահական ընտրություններում Մ.Ահմադինեժադի հիմնական մրցակիցը պետք է դառնար բարեփոխիչների ճամբարի ներկայացուցիչը, ինչը եւ տեղի ունեցավ:

2. Բարեփոխիչներն իրենց հերթին կարողացան հանրությանը ներկայանալ նոր, սակայն բավական ճանաչված թեկնածուով: Իրանի նախկին վարչապետ Միր Հոսեյն Մուսավին վերջին 20 տարիների ընթացքում հեռու էր քաղաքականությունից եւ անմիջապես կապված չէր Մ.Խաթամիի քաղաքական թիմի հետ, որը, ստանալով ընտրողների լայն

աջակցությունը, չկարողացավ իրական քաղաքական եւ տնտեսական փոփոխություններ ապահովել երկրում:

Այս երկու հիմնական հանգամանքներն առաջնային դեր խաղացին բարեփոխիչների ուժերի վերակազմավորման գործում, լավ հիմք ստեղծեցին հանուն նախագահական աթոռի իրական պայքար ծավալելու համար:

Նախընտրական պայքարն Իրանում, պաշտոնական մեկնարկի առաջին իսկ օրվանից, թեժ բնույթ ստացավ: Մ.Յ. Մուսավիհն, իր շուրջը համախմբելով քաղաքաբնակ երիտասարդության հսկայական մի բանակ, ծավալեց Իրանի պատմության մեջ հավանաբար ամենակտիվ եւ լայնածավալ նախընտրական պայքարը: Այն ներառում էր զանգվածային ցույցերի կազմակերպում, «տնից տուն» քարոզչություն, էլեկտրոնային տեղեկատվության միջոցներով լայնածավալ քարոզչության իրականացում, տնտեսական եւ քաղաքական բնույթի վերլուծությունների պատրաստում եւ տարածում, արտերկրում բնակվող իրանցիների միջոցով տեղեկատվության տարածում, նրանց կողմից բարեկամների շրջանում քարոզչության իրականացում: Մ.Յ. Մուսավիհն իր բոլոր հանդիպումներում ուղեկցում էր նրա կինը, ինչը «նորարարություն» էր Իրանում եւ բավական դրական արձագանքներ ստացավ հասարակության շրջանում:

Իր հերթին, գործող նախագահ Մ.Ահմադինեժադի քարոզչությունը նույնպես հսկայական հասարակական հնչեղություն ունեցավ: Մ.Ահմադինեժադը նախընտրական պայքարում ոչ միայն կրկնեց իր գրեթե բոլոր սկանդալային հայտարարություններն Իսրայելի հասցեին, այլ նաեւ հանդես եկավ Իրանի նախկին նախագահների վերաբերյալ կոշտ եւ վիրավորական հայտարարություններով: Մ.Յ. Մուսավիհի հետ հեռուստատեսային բանավեժի ժամանակ նա վերջինիս եւ Իրանի նախկին նախագահներ Ա.Ա. Հաշեմի-Ռաֆսանջանիին ու Մ.Խաթամիին մեղադրեց երկրի տնտեսական անկման եւ կաշառակերության ծաղկման մեջ: Այս մեղադրանքները դարձան վերջին նախընտրական շաբաթի հիմնական քննարկումների առարկան եւ ի ցույց դրեցին Իրանի ներքաղաքական կյանքում տեղ գտած հակասությունների մի մեծ փունջ: Մ.Խաթամին հայտարարեց, որ չի պատրաստվում պատասխանել երկիրը կործանման տանող մարդու հայտարարությանը, իսկ Հաշեմի-Ռաֆսանջանին հանդես եկավ բաց նամակով՝ ուղղված Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.Խամենեիին: Հաշեմի-Ռաֆսանջանիի նամակն ուշագրավ է ոչ միայն նրանով, որ Մ.Ահմադինեժադին անվանել է «ստախոս» եւ իսլամի արժեհամակարգին ընդդիմացող, այլ նաեւ Ա.Խամենեիին ուղղված մեղադրական տոնով: Նամակում, մասնավորապես, ասվում է. «Եթե համակարգը չի կարող կամ չի ուզում

դեմ հանդես գալ այն ստին, վիրավորանքներին եւ մեղադրանքներին, որոնք հնչեցին հեռուստաբանավեճի ժամանակ, ապա ինչպե՞ս մենք կարող ենք մեզ համարել սուրբ իսլամական համակարգի հետեւորդներ... հանգցրեք այն կրակը, որն արդեն իսկ երեւում է, կասեցրեք կրակի տարածումը»:

Հաշեմի-Ռաֆսանջանիի նամակը մնաց անպատասխան եւ, ինչպես ինքն է հայտարարել, իրեն անգամ ժամանակ չի տրամադրվել հեռուստատեսությամբ «Ահմադինեժադի վիրավորանքներին պատասխանելու համար»: Նշենք, որ Հաշեմի-Ռաֆսանջանին այսօր ոչ միայն ղեկավարում է Որոշումների ընդունման նպատակահարմարության ազդեցիկ խորհուրդը, այլեւ 2006-ից հանդիսանում է 86 հոգուց կազմված Փորձագետների ասամբլեայի ղեկավարը, որի իրավասության տակ է գտնվում երկրի հոգեւոր առաջնորդի, այսինքն՝ իրական ղեկավարի ընտրությունը կամ գործողի պաշտոնաթողությունը:

Ընտրությունների ընթացքն ու արդյունքները

Արդեն հունիսի 12-ին, ժամը 11-ին, Իրանի ներքին գործերի նախարարությունը, որն իրավասու է ընտրությունների անցկացման համար, հանդես եկավ հայտարարությամբ, թե ընտրողների մեծ հոսքի վերլուծությունը վկայում է այն մասին, որ քաղաքացիների մասնակցությունն ընտրություններին կարող է հասնել 90 տոկոսի:

Իրանի գրեթե բոլոր նահանգներում արդեն առավոտյան նկատվում էր շատ բարձր մասնակցություն, որի արդյունքում ընտրությունների վերջնաժամը երկարացվեց 3 անգամ, ընդհանուր առմամբ 5 ժամով:

Քաղաքացիների մեծ հոսքը թե՛ միջազգային վերլուծաբանների ու լրագրողների, թե՛ իրանական ընդդիմության շրջանում կասկածներ եւ անգամ վստահություն առաջացրեց այն մասին, որ Մ.Յ. Մուսավիի հաղթելու շանսերը կտրուկ աճում են: Նման տեսակետի եւ միջազգային լրահոսում տարածվող եզրակացությունների հիմնական պատճառն այն էր, որ, որպես կանոն, հասարակությունը քաղաքական բարձր ակտիվություն ցուցաբերում է փոփոխությունների ակնկալիքներով՝ կապելով հույսը քաղաքական ընդդիմության հաղթանակի հետ: Արդեն ժամը 18:00-ին Մուսավիի նախընտրական շտաբը հայտարարեց, որ իրենց անցկացրած հարցումները վկայում են այն մասին, թե իրենց թեկնածուն հավաքելու է ձայների 60 տոկոսը: Սա, իր հերթին, էլ ավելի գրգռեց հասարակությանը, հիմնականում Մուսավիին աջակցող քաղաքաբնակ երիտասարդությանը, որն արդեն 12-13-ի լույս գիշերը դուրս էր եկել քաղաքների կենտրոնական

փողոցներ եւ վանկարկում էր Մուսավիի նախընտրական ոչ պաշտոնական կարգախոսը դարձած «Ալլահ աքբարը»:

Սակայն ընտրությունների արդյունքների հրապարակումը ամբողջովին այլ պատկեր արձանագրեց: Համաձայն դրանց՝ Մուսավիին ստացավ ձայների ընդամենը 34 տոկոսը, գործող նախագահը՝ 63:

Հետընտրական զարգացումները

Ընտրությունների նախնական արդյունքների հրապարակումից հետո Մ.Յ. Մուսավիին հայտարարեց, որ ընտրությունները կեղծվել են գործող նախագահի օգտին: Հունիսի 13-ին Թեհրանում սկսվեց առաջին մեծ ցույցը, որն ընթանում էր «Մահ բռնակալին» կոչերով: Արդեն երեկոյան սկսվեցին առաջին բախումները ցուցարարների եւ ոստիկանների միջև, որոնք ուղեկցվեցին ավտոմեքենաների եւ խանութների հրկիզումով: Բախումների արդյունքում, ըստ ոչ պաշտոնական տվյալների, մի քանի հարյուր մարդ վիրավորվեց: Հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը ոստիկանությունը եւ հատուկ ծառայությունները սկսեցին ընդդիմության ներկայացուցիչների, Մ.Յ. Մուսավիին պաշտպանած քաղաքական կուսակցությունների եւ երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների ձերբակալությունները: Ընդհանուր առմամբ գիշերվա ընթացքում ձերբակալվեց 300-500 հոգի, իսկ Մ.Յ. Մուսավիին, ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների, իր բնակարանից տեղափոխվեց մեկ այլ բնակարան եւ դրվեց տնային կալանքի տակ:

Հունիսի 14-ին Մուսավիին նամակ ուղղեց բարձրագույն օրենսդրական գործառույթներով օժտված Պահապանների խորհրդին՝ պահանջելով չեղյալ հայտարարել ընտրությունները: Նույն օրը երեկոյան Մուսավիին ընդունեց Իրանի հոգեւոր առաջնորդ Ա.խամենեին, որն իր հերթին հայտնեց նրան, որ ընտրությունների արդյունքները չեղյալ չեն հայտարարվելու: Հունիսի 14-15-ի լույս գիշերը Թեհրան, Սպահան եւ Մեշհեդ քաղաքներ մտան ոստիկանության զրահատանկային զորքերը: Չնայած սրան՝ հունիսի 15-ի առավոտյան Թեհրանի փողոցներում սկսվեցին հերթական ցույցերը:

Ըստ ոչ պաշտոնական տեղեկատվության, հունիսի 14-ի գիշերը ձերբակալվել եւ տնային կալանքի տակ էր առնվել նաեւ Իրանի նախկին նախագահ Մ.խաթամին: Սակայն հունիսի 15-ին խաթամին Մուսավիի հետ միացավ Թեհրանի կենտրոնում հավաքված ցուցարարներին:

Արդեն հունիսի 15-ի երեկոյան հայտնվեցին առաջին տեղեկություններն ընդհարումների ժամանակ զոհերի մասին, ինչը հետագայում հաստատվեց ոստիկանության կողմից:

Հնարավոր զարգացումներ

Ներկայումս դժվար է կանխատեսել, թե ինչ հունով կընթանան հետընտրական զարգացումները: Սակայն սխալ կլինի ենթադրել, թե Մուսավին ժողովրդին տանում է դեպի «թավշյա հեղափոխություն»: Այսպիսի հնարավորությունը բացառված է հիմնականում այն պատճառով, որ`

❖ Իրանի պետական համակարգը բավական լավ է կազմակերպված եւ պատրաստ է կոշտ արձագանքել ցանկացած հեղաշրջման փորձի,

❖ Մուսավին քաղաքական մարզինալ չէ եւ իր նախընտրական պայքարի ընթացքում պետական համակարգի տապալման նպատակ չի դրել:

Մուսավինի դիմումը Պահապանների խորհրդին, որում պահանջում է չեղյալ հայտարարել ընտրությունները, եւ նրա հանդիպումը հոգեւոր առաջնորդի հետ ցույց են տալիս, որ նա գնում է սահմանադրական եւ օրենսդրական ճանապարհով խնդիրներ լուծելուն: Ակնհայտ է, որ այս եղանակով Մուսավին դժվար թե կարողանա հասնել դրական արդյունքների, սակայն այն որոշակիորեն կմեղմի Իրանում քաղաքական լարված իրավիճակը: Բողոքներն ու ընդհարումները ոստիկանության հետ, եթե դրանք չանցնեն թույլատրված սահմանը եւ չբերեն մեծաքանակ զոհերի, բավական ձեռնտու են Մուսավինին եւ նրան աջակցողներին, քանի որ դրանց արդյունքում կարող է ձեւավորվել խոշոր քաղաքական շարժում, որը հաջորդ խորհրդարանական եւ նախագահական ընտրություններին կարող է հանդես գալ ավելի լավ եւ կազմակերպված հիմքերով:

ԱՄՆ բավական չեզոք դիրքորոշումն ընտրությունների ընթացքի եւ արդյունքների վերաբերյալ ցույց են տալիս, որ Վաշինգտոնն արդեն համակերպվել է Մ.Ահմադինեժադի վերընտրման փաստի հետ եւ ըստ նախագահ Օբամայի` պատրաստ է շարունակել Թեհրանի հետ կապերի հաստատման եւ լավացման քաղաքականությունը:

«ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ»

Սթիվեն Քոհեն – ամերիկյան պատմաբան եւ քաղաքագետ, Նյու Յորքի համալսարանի պրոֆեսոր, զբաղվում է Ռուսաստանի վերաբերյալ հետազոտություններով: 2009թ. պարգևատրվել է ՌԴ «Բարեկամության» շքանշանով:

Ստորել ներկայացնում ենք հատվածներ «Washington ProFile» հանդեսին Ս.Քոհենի տված հարցազրույցից:

Հարց – Այս տասնամյակի սկզբին ամերիկա-ռուսական հարաբերությունների վերաբերյալ եղան բազում լավատեսական կանխատեսումներ: Խոսում էին «ԱՄՆ–Ռուսաստան ռազմավարական գործընկերության» մասին: Սակայն, արդյունքում, տասնամյակի վերջին Մոսկվայի եւ Վաշինգտոնի միջեւ հարաբերությունները հայտնվեցին խոր ճգնաժամի մեջ: Ի՞նչ տեղի ունեցավ:

Պատ.– Դա շատ կարելի էր հարց է, որն ԱՄՆ-ում հաճախ է առաջադրվել, հատկապես վերջին տարիներին: Բայց ԱՄՆ-ում դրան սոսկ մեկ պատասխան է տրվում: Այն հնչում է այսպես. 1990-ական թվականներին նախագահներ Քլինթոնն ու Ելցինը ստեղծեցին ռուս-ամերիկյան գործընկերություն եւ հաստատեցին բարեկամություն. այն ժամանակ ամեն ինչ հիանալի էր: Ապա Ռուսաստանում իշխանության եկավ Վլադիմիր Պուտինը եւ խորտակեց ամեն ինչ: Եվ դա սխալ պատասխան է, քանզի այն խնդրի մի մասն է, որն ի հայտ է եկել դեռ Պուտինի ու Ջորջ Բուշ-կրտսերի իշխանության գալուց առաջ:

Մեր երկու պետությունների հարաբերությունները 1990-ական թվականներին լրջորեն վնասվեցին, քանզի Քլինթոնի վարչակազմը նախընտրեց Ռուսաստանին վերաբերվել ոչ իբրեւ հավասար գործընկերոջ, այլ որպես պարտված տերության: Տրամաբանությունը հետեւյալն էր. Ռուսաստանը պարտվել է «սառը պատերազմը», իսկ Ամերիկան՝ հաղթել: Հետեւաբար, Ռուսաստանը գտնվում է Երկրորդ աշխարհամարտից հետո ճապոնիայի ու Գերմանիայի մակարդակին: Արդյունքում՝ Վաշինգտոնը համոզված էր իր իրավունքի մեջ՝ Ռուսաստանին թելադրելու այն, թե ինչ անի ներքին քաղաքականության եւ տնտեսության ոլորտում, եւ այն բանում, որ արտաքին քաղաքական ասպարեզում ռուսական շահերը պետք է նույնական լինեն ամերիկյանին: Այսինքն՝ խնդիրը ծագել է գրեթե 20 տարի առաջ, եւ ահա ինչու այն այդչափ լուրջ է:

Ցավալի է, որ երբ հնարավորություն առաջացավ ձերբազատվել 1990-ականների վատ ժառանգությունից եւ խաղն սկսել «մաքուր էջից», այդ հնարավորությունը չօգտագործվեց եւ, դեռ ավելին, իրավիճակը բարդացավ: ԱՄՆ-ի վրա 2001թ. սեպտեմբերի 11-ի գրոհից հետո Կրեմլը, որտեղ այն ժամանակ աշխատում էր Պուտինը, աֆղանական «Թալիբանի» դեմ պայքարում ԱՄՆ-ին ավելի օգնեց, քան աշխարհի ցանկացած այլ պետություն, քան ՆԱՏՕ-ի ցանկացած երկիր: Ռուսաստանն ԱՄՆ-ին ապահովում էր հետախուզական տեղեկատվությամբ, թույլատրում օգտագործել իր օդային տարածքը, ինչը հնարավոր դարձրեց Կենտրոնական Ասիայում ռազմակայանների տեղակայումը: Առավել եւս, Ռուսաստանն անգամ ԱՄՆ տնօրինությանը հանձնեց իր կողմից սատարվող Աֆղանստանի «Յուսիսային դաշինքի» մարտական ուժերը, որի շնորհիվ ամերիկացիների բազմաթիվ կյանքեր փրկվեցին:

Պուտինը բանականորեն կարծում էր, թե այդ ամենից հետո Միացյալ Նահանգների հետ հարաբերությունները կանցնեն իրական եւ հավասար գործընկերության մակարդակի: Սակայն Ռուսաստանն ի՞նչ ստացավ, երբ «Թալիբանը» հեռացվեց իշխանությունից: Ռուսաստանը հանվեց այն պետությունների ցանկից, որոնք զբաղվում էին Աֆղանստանի քաղաքական կառուցվածքով: ԱՄՆ-ը ցանկացավ Կենտրոնական Ասիայում ունենալ մշտական ռազմակայաններ, թեեւ նախապես հայտարարել էր, որ այդ կայանները լինելու են միայն ժամանակավոր: ԱՄՆ-ը միակողմանիորեն դուրս եկավ Հակահրթիռային պաշտպանության մասին պայմանագրից, որը Ռուսաստանը համարում էր միջուկային անվտանգության հիմքը: Ավելին, գնալով Քլինթոնի հետքերով, Բուշի վարչակազմը ՆԱՏՕ-ն էլ ավելի մոտեցրեց ռուսական սահմաններին:

Հետագայում Պուտինն ասաց, որ Ռուսաստանին դավաճանեցին ու խաբեցին. եւ դա չափազանց կարելու հայտարարություն էր: Երբ 2009թ. սկզբին նախագահ Մեդվեդեւը ժամանեց Վաշինգտոն, նա մասնակցեց Արտաքին հարաբերությունների խորհրդի փորձագետների (Մադլեն Օլբրայթի գլխավորությամբ) հետ հանդիպմանը: Մեդվեդեւը կրկնեց այդ նույն միտքը եւ ասաց, որ ԱՄՆ-ը 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո բաց թողեց Ռուսաստանի հետ գործընկերության հաստատման հնարավորությունը:

Հարց – Հաճախ պնդում են, թե Ռուսաստանի նկատմամբ ԱՄՆ քաղաքականությունը մեծ չափով պայմանավորված է Ռուսաստանում հարգի հակաամերիկյան տրամադրություններով, որոնք հաճախակիորեն հրահրում են ռուսական պետության կողմից վերահսկվող ՋԼՄ-ները: Սեփական բնակչության այդքան լուրջ գաղափարախոսական մշակումից հետո Ռուսաստանն ընդունա՞կ է, արդյոք, սեղմել «բեռնաթափման» կոճակը:

Պատ. – Կրեմլի եւ այլ պաշտոնական անձանց աջակցությամբ, ռուսական հեռուստաալիքները պարբերաբար ցուցադրում են ծրագրեր, որոնցում Ամերիկյան ներկայացվում է բացասական լույսի ներքո: Սակայն Ռուսաստանի բազմաթիվ բացասական պատկերներ հանդիպում են նաեւ ամերիկյան ՋԼՄ-ներում, TV-ներում եւ կինոֆիլմերում: Այսինքն՝ նույն բանը երկու երկրներում էլ տեղի է ունենում:

1990-ականների սկզբին, երբ ԽՍՀՄ-ը դադարեցրել էր իր գոյությունը, ԱՄՆ-ում ընդունված էր համարել, որ ռուսների երիտասարդ սերունդը մեր բնական դաշնակիցն է, որովհետեւ նրանք հանդես են գալու հանուն ժողովրդավարության եւ ազատ շուկայի, մինչդեռ ռուսների ավագ սերունդը բնական դաշնակից չի հանդիսանում: Սակայն 1990-ական թվականների վերջին ռուս երիտասարդության շրջանում հակաամերիկյան տրամադրությունները գործնականում նույնքան հզոր էին, որքան Ռուսաստանի մյուս սերունդների մեջ: Ինչո՞ւ: Որովհետեւ 1990-ականների տնտեսական ճգնաժամը, որը հարվածեց յուրաքանչյուրին, արդարացիորեն կամ անարդարացիորեն զուգորդվում էր Մոսկվային տրված ամերիկյան խորհուրդների հետ: Կամ վերցնենք 1999թ. Սերբիայի ռմբահարումները: Երիտասարդ մարդիկ դրանց վրդովմունքով արձագանքեցին՝ ճիշտ այնպես, ինչպես տարեցները: Այլ խոսքերով՝ բոլոր երկրներում էլ սերունդների կոնֆլիկտն առկա է, բայց այն մի շարք հիմնարար հարցերում, ինչպիսին են ազգային հպարտությունը, ազգայնականությունը եւ այլն, բացակայում է:

Եթե ԱՄՆ-ը փոխի իր քաղաքականությունը, ապա երիտասարդ ռուսներն ավելի՞ լավ կվերաբերվեն նրա հետ: Պատասխանը մասնակի դրական է: Արդյունքը կախված է երեք գործոններից: Առաջին. ԱՄՆ քաղաքականության մեջ նմանատիպ փոփոխությունների էության ու մասշտաբի հանդեպ ես առանձնակի լավատես չեմ: Երկրորդ. շատ բան կախված է Կրեմլի մեղիա քաղաքականությունից: Սա շատ կարելոր է: Ես հատուկ ընդգծում եմ TV-ների նշանակությունը, քանզի ռուսների 85 տոկոսը, այնպես, ինչպես եւ ամերիկացիները, նորություններն ստանում են TV-ներից, այլ ոչ թե թերթերից:

Երրորդ գործոնը եւս չափազանց լուրջ է: Ամենուրեք, ուր մարդիկ բախվում են տնտեսական ճգնաժամին, նրանք փորձում են կողքից «քավության նոխազ» գտնել: Դա տեղի է ունենում ոչ միայն Ռուսաստանում եւ ԱՄՆ-ում. այն գոյություն է ունեցել միշտ եւ ամենուր: Այսինքն՝ երբ Ռուսաստանի վարչապետ Պուտինն ասում է, թե Ռուսաստանի տնտեսական ճգնաժամը ծնվել է ԱՄՆ-ում, ապա նա միակ մարդը չէ, որ հավատում է դրան: Հետեւաբար, ամերիկյան բանջարանոց է թռչում հերթական քարը, եւ ռուսներն արձագանքում են դրան: Սակայն ԱՄՆ-ում եւս՝ այն չափով,

որքանով տնտեսական ճգնաժամը հարվածում է երկրի բնակիչներին, նրանք դառնում են շրջապատող աշխարհի նկատմամբ առավել բացասական տրամադրված:

Հարց – Ներկայիս տնտեսական ճգնաժամն ինչպիսի՞ ազդեցություն կունենա Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ ուժերի ապագա հաշվեկշռի վրա:

Պատ.– Ես համոզված եմ, որ այն, իր ողջ նշանակությամբ հանդերձ, սոսկ երկրորդական գործոն է: ԱՄՆ-ում լայն տարածված է այն համոզմունքը, թե ճգնաժամի արդյունքում Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը լինելու է առավել համաձայնողական, առավել գիշողական եւ պակաս նպատակասլաց: Ինձ թվում է, որ դա կեղծ պատկերացում է: Այսօր ռուսական արտաքին քաղաքականությունն անդրադարձն է նրա, ինչ տեղի ունեցավ 1990-ական թվականներին եւ 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո: Միայն Ռուսաստանի նկատմամբ ամերիկյան քաղաքականության արմատական փոփոխությունները կբերեն ԱՄՆ-ի հանդեպ ռուսական քաղաքականության հիմնարար փոփոխությունների: Ռուսական քաղաքական վերնախավն անհրաժեշտության դեպքում մինչեւ վերջին ռուբլին կծախսի, որպեսզի պաշտպանի այն, ինչն իրեն թվում է որպես արտերկրում ռուսական ազգային շահ: Սովորաբար, ամեն ինչի համար վճարում են հասարակ ռուսները, բայց ինձ չի թվում, թե ճգնաժամը կփոխի ռուսական արտաքին քաղաքականությունը:

Սակայն մի խնդիր Ռուսաստանին դժվար կլինի լուծել՝ արդիականացնել իր զինված ուժերը, որին կոչ է անում նախագահ Մեդվեդեւը: Սա շատ թանկ զբաղմունք է, եւ այնքան ժամանակ, քանի դեռ նավթի գներն էականորեն չեն աճել, պետությունը գումար քիչ կունենա: Թերեւս Կրեմլը կշարունակի արդիականացումը երկու պատճառով՝ ռուսական սահմաններին ՆԱՏՕ-ի մոտեցման եւ 2008թ. օգոստոսին Վրաստանում կատարվածի:

Ենթադրվում է, որ տնտեսական ճգնաժամի ազդեցությունը գերազնահատվում է: Փաստորեն, ճգնաժամն ավելի շատ ազդում է ԱՄՆ, քան Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա: ԱՄՆ-ը վարում է երկու պատերազմ՝ Իրաքում եւ Աֆղանստանում: Նախագահ Օբաման հայտարարեց, որ ինքը դուրս է բերելու ամերիկյան զորքերն Իրաքից, սակայն ես վստահ չեմ, թե նման բան տեղի կունենա՝ առնվազն այն չափով եւ այն գրաֆիկով, որը խոստացվում է: ԱՄՆ-ը ավելի եւ ավելի է խրվում Աֆղանստանի գործերում: Պատերազմն այդ երկրում անհնար է հաղթել ու լինելու է շատ թանկ հաճույք, եւ Ռուսաստանն այդ մասին անհամեմատ ավելի գիտի, քան մյուսները:

ԱՄՆ-ին պարզապես չեն բավականացնում զորքերը, եւ դա, ինչպես ինձ թվում է, ազդում է ամերիկյան դիվանագիտության վրա: Լինելով նախագահի թեկնածու՝ Բարաք Օբաման ամերիկյան դիվանագիտական պատմության մեջ նոր դարաշրջանի սկսման կոչ արեց, ինչը ես հակված եմ այս կերպ մեկնաբանել. ամենաշատը հենվել բանակցությունների եւ ամենաքիչը՝ ռազմական հզորության վրա: Սա լավ երեւոյթ է, ու եթե տնտեսական ճգնաժամը դրականորեն ազդի նման դիվանագիտության վրա, դա նույնպես լավ է: Հույս կա, որ Կրեմլը դրան համարժեք կերպով կարծագանքի:

Հարց – Հանրահայտ կարծիք է, թե Ռուսաստանը դավանում է նեո-իմպերիալիստական գաղափարախոսություն, ինչն առանձնակիորեն դրսեւորվում է հետխորհրդային պետությունների նկատմամբ քաղաքականության մեջ: Այդ մասին Դուք ի՞նչ եք մտածում:

Պատ. – Դա չափազանց կարելոր հարց է եւ, հնարավոր է, ամենակարելոր հարցը ամերիկա-ռուսական հարաբերություններում: Այն նախկին խորհրդային հանրապետությունների եւ, հատկապես, Ուկրաինայի ու Վրաստանի հարցն է: Ես չեմ հավատում, թե ամերիկա-ռուսական հարաբերություններում ինչ-որ հիմնավոր դրական փոփոխություն կլինի, եւ այնքան ժամանակ, քանի դեռ Կրեմլը չի համոզվել, որ Վաշինգտոնն այլեւս չի փորձում Ուկրաինան եւ Վրաստանը դարձնել ՆԱՏՕ-ի անդամներ, իրական գործընկերություն հնարավոր չէ:

Այստեղ առկա է ընկալումների բախում: Մոսկվան ՆԱՏՕ-ի էքսպանսիան համարում է ամերիկյան իմպերիալիզմ, իսկ Վաշինգտոնը Հյուսիսատլանտյան դաշինքի այդ ընդարձակմանը Մոսկվայի բացասական արձագանքն է ընկալում իբրեւ իմպերիալիզմ: Սակայն ի՞նչ է նշանակում «իմպերիալիզմ» հասկացությունը: Ռուսաստանի վերաբերյալ ես գտնում եմ, որ ցանկացած մեծ տերություն, եւ, ընդհանրապես, ցանկացած երկիր ունի սեփական սահմանների անվտանգության իրավունք: Ուստի ոչ ոք չպիտի զարմանա, որ Ռուսաստանին վրդովեցրել է 1990-ական թվականներին նախաձեռնված դեպի արեւելք ՆԱՏՕ-ի ընդարձակումը:

Եթե խոսքը պարզապես Վրաստանում եւ Ուկրաինայում քաղաքական ազդեցության համար մրցակցության մասին է՝ առանց որեւէ խոսակցության ՆԱՏՕ-ին նրանց անդամակցության վերաբերյալ, ապա դա միանգամայն այլ նյութ է: Սակայն ՆԱՏՕ-ի ընդարձակումը ռազմականացրեց Վրաստանի եւ Ուկրաինայի համար մրցակցությունն ու դարձավ 2008թ. օգոստոսյան պատերազմի պատճառներից մեկը: Այսօր այն աշխարհի ամենավտանգավոր շրջաններից է: Այո, այդ պատերազմը

ռուս-վրացական էր, բայց այն նաեւ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի միջեւ միջնորդավորված պատերազմ էր: Մարդիկ պետք է այդ մասին մտածեն:

«Սառը պատերազմի» ժամանակ ԽՍՀՄ-ի եւ ԱՄՆ-ի միջեւ եղան միջնորդավորված պատերազմներ Աֆրիկայում, ուր մենք սատարում էինք մի կողմին, իսկ Մոսկվան՝ մյուս: Նույնը տեղի ունեցավ նաեւ Աֆղանստանում, որտեղ ԱՄՆ-ը աջակցում էր աֆղաններին, որոնք կռվում էին խորհրդային բռնազավթման դեմ: Ռուսաստանը միջուկային տերություն է, եւ մենք էլ միջուկային տերություն ենք: «Սառը պատերազմի» ժամանակներում անհնար էր, որ կոնֆլիկտը տեղի ունենար ամերիկյան կամ խորհրդային սահմանների մոտ: Այսօր դա տեղի է ունեցել: Եղել է հաղորդագրություն (չգիտեմ՝ ճշմարտացի, թե ոչ), որ երբ սկսվել է պատերազմը Չարավ. Օսիայում, Մոսկվան հրթիռային արձակման կայանքները (ոչ միջուկային մարտազլխիկները) տեղափոխել է Չարավ. Օսիա, քանզի անհանգստացել է, թե ՆԱՏՕ-ն կմիջամտի կոնֆլիկտին:

Եթե բոլորը տեղի է ունեցել հենց այդպես, ապա խորհեք, թե այդ ամենն ինչ վտանգավոր է: Սպառնալիքի մակարդակով՝ այս իրավիճակը մոտ է Կուբայական ճգնաժամին: Դա ցույց է տալիս, որ ներկա պահին որքան վատ են ռուս-ամերիկյան հարաբերությունները եւ ինչու ՆԱՏՕ-ի էքսպանսիան երկու կողմերի համար էլ հիմնական ու առավել կարեւոր խնդիրն է:

Ես արդեն ասացի, որ յուրաքանչյուր պետություն ունի սեփական սահմանների անվտանգությունը հոգալու իրավունք: Դա նշանակում է, որ այդ սահմանների մոտ չպետք է լինեն անցանկալի օտարերկրյա ռազմակայաններ: Չատկապես այն արտերկրյա ուժերի կայանները, որոնց հետ կա պատմական կոնֆլիկտ: Ամերիկյան իմ գործընկերներն ու լրագրողներն ինձ հաճախ հարցնում են. ինչո՞ւ է Ռուսաստանն այդպես նյարդայնորեն արձագանքում Բալթիայի երկրներում կամ Վրաստանում եւ Ուկրաինայում ՆԱՏՕ-ի կայաններ ստեղծելու հնարավորությանը: Ես նրանց առաջարկում եմ պատկերացնել, որ վաղը Կանադայում ու Մեքսիկայում հայտնվում են ռուսական ռազմակայաններ, իսկ Վենեսուելայում կամ Կուբայում՝ հակահրթիռային պաշտպանության համակարգեր: ԱՄՆ նախագահին անվտանգություն կհայտնվի, եթե նա դրանց համարժեք չարձագանքի: Այսինքն՝ ձեզ պատկերացրեք Մոսկվայի տեղը:

Ինչպիսի՞ն կարող է լինել պատասխանը: Անձամբ ես կարծում եմ, որ լուծումը կարող է լինել Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջեւ համաձայնագիրը, ըստ որի՝ Ռուսաստանը ստանում է երաշխիքներ, որ իր սահմանների մոտ չեն հայտնվի ՆԱՏՕ-ի կամ Արեւմուտքի այլ երկրների ռազմակայաններ՝ ներառյալ Բալթիայի երկրները, որոնք հանդիսանում են ՆԱՏՕ-ի

անդամ, բայց դեռևս չունեն նման կայաններ, թեև համապատասխան ծրագրեր կան: Բացի այդ, Ուկրաինան եւ Վրաստանը չպետք է դառնան ՆԱՏՕ-ի անդամ: Փոխարենը՝ Մոսկվան պետք է ճանաչի Ուկրաինայի եւ Վրաստանի լիակատար քաղաքական անկախությունը, ինչը նշանակում է այնտեղ անցկացված ընտրությունների արդյունքների անվերապահ ճանաչում: Այսինքն՝ եթե Ուկրաինան ընտրելու է հակառուս նախագահ, ապա դա վատ է Մոսկվայի համար, սակայն այն չի նշանակելու, թե Ուկրաինան դառնալու է ՆԱՏՕ-ի անդամ: Եվ քանզի Ուկրաինան ու Ռուսաստանը պատմականորեն կապված են, եւ Կիևը ռուսական էներգակիրների մատակարարումների կարիքն ունի, ամեն ինչ ընթանալու է բնականոն հունով: Այսինքն՝ Ուկրաինան լինելու է ինչ-որ բանով Երկրորդ աշխարհամարտից հետո Ֆինլանդիայի նմանատիպը: Ֆինլանդիայում չկան օտարերկրյա ռազմակայաններ, այն պահպանում է ռազմական չեզոքություն: Դա լինելու է քայլ ճիշտ ուղղությամբ: Բայց եթե ռազմականացվեն այդ հարաբերությունները՝ ռազմակայաններ տեղակայելով ռուսական սահմանների մոտ, ապա իրադրությունը դուրս կգա հսկողությունից եւ կդառնա սպառնալից:

Եվ վերջինը: Ռուսաստանին սահմանամերձ բոլոր ոչ մեծ պետությունները, որոնց խոստացված է ՆԱՏՕ-ի անդամություն, Մոսկվայի հետ չեն հաստատում անկախ ու խաղաղ հարաբերություններ, այլ հարվածում են Ռուսաստանի քթին եւ թաքնվում ԱՄՆ թիկունքում: Այլ խոսքերով, ոչ Բալթիայի երկրները, ոչ Ուկրաինան եւ Վրաստանը, չունեն շարժառիթ հաստատելու լիակատար դիվանագիտական հարաբերություններ Ռուսաստանի հետ, քանզի համարում են, որ ԱՄՆ-ը եւ ՆԱՏՕ-ն կգան իրենց օգնության՝ անկախ նրանից, թե իրենք ինչ են արել: Հենց այդ պատճառով էլ հարկավոր է հրաժարվել այնպիսի մտածելակերպից, որը կապված է ՆԱՏՕ-ի ընդարձակման հետ:

Հարց – Վաշինգտոնում ընդգծում են, թե ԱՄՆ-ը ոչ ոքի չի պարտադրում մտնել ՆԱՏՕ, իսկ դաշինքի ընդարձակումն այն պատճառով է, որ հետխորհրդային շատ հանրապետություններ նմանատիպ անդամակցությունը համարում են օգտավետ իրենց համար եւ պետք է ունենան ընտրության իրավունք՝ մտնել, թե չմտնել դաշինքի մեջ: Ձեր մեկնաբանությունը:

Պատ. – Հաճախ են ասում, թե ցանկացած երկիր իրավունք ունի ձեռք բերել բարեկամներ կամ փորձել ստեղծել քաղաքական դաշինք ցանկացած պետության հետ, որին կամենում է: Ես լիովին համաձայն եմ դրան: Սակայն երկիրն իրավունք չունի արտաքին ուժ հրավիրել՝ կառուցելու իր

տարածքում ռազմակայան, որը սպառնում է հարեւան պետությանը: ՆԱՏՕ-ի էքսպանսիան ռազմականացրել է ԱՄՆ եւ Ռուսաստանի, ԱՄՆ եւ հետխորհրդային պետությունների, Ռուսաստանի եւ մյուս հետխորհրդային հանրապետությունների միջեւ հարաբերությունները: Հարկավոր է կանգնեցնել ՆԱՏՕ-ի էքսպանսիան, վերացնել ռազմական կողմը եւ թույլ տալ նրանց մրցակցել այդ պարադիգմից դուրս: Եթե Մոսկվան ցանկանում է Ուկրաինային արտոնյալ գներով նավթ եւ գազ տալ, եթե Վաշինգտոնը ցանկանում է Ուկրաինային փող տալ, ապա դրանից շահում է Ուկրաինայի ժողովուրդը, որն ավելի լավ կապրի: Այս նույնը ճիշտ է նաեւ Վրաստանի ժողովրդի համար: Սակայն, այնքան ժամանակ, քանի դեռ շարունակվում է ռազմական մրցակցությունը, ամեն ինչի համար այս ժողովուրդներն են վճարելու:

Գլխավորը, որ մենք պիտի հասկանանք՝ այն է, որ ՆԱՏՕ-ն կյանքը դարձնում է պակաս անվտանգ: Երբ Քլինթոնի ժամանակ Ջորջ Քեմանն իմացավ դեպի արեւելք ՆԱՏՕ-ի էքսպանսիայի մասին, նա հայտարարեց, թե դա վատագույն արտաքին քաղաքական սխալն է, որ ԱՄՆ-ը թույլ է տվել «սառը պատերազմից» ի վեր: Քեմանը միանգամայն ճիշտ էր: ՆԱՏՕ-ի ընդարձակումը բոլորին ստիպեց մոռանալ դիվանագիտության մասին եւ փոխարենը հենվել «ռազմականացված» մտածողության ու ռազմակայանների վրա: Արդյունքում՝ աշխարհը դարձել է առավել վտանգավոր, քան «սառը պատերազմի» ժամանակ էր:

Washington ProFile

08.05.2009

ԱՆԱՎԱՐՏ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ»

Սերգեյ Կարազանով

Մոզական ինը թիվը

Լրանում է «սառը պատերազմի» ավարտը խորհրդանշող իրադարձության՝ Բեռլինյան պատի անկման 20 տարին: Այս հորեյանը գլխավորն է իրադարձությունների կլոր տարեթվերի գրեթե մոզական դիտվող զուգակցության մեջ, որը սահմանեց այն քաղաքական կարգը (կամ անկարգությունը), ուր մենք ապրում ենք:

1919թ.–կնքվեց անարդարացի Վերսայան հաշտությունը՝ Գերմանիան վերածելով ռեիզիոնիստական, իսկ հետագայում՝ նաեւ ռեւանշիստական պետության:

1929թ.–բռնկվեց մեծ ճգնաժամը՝ կտրուկ սրելով միջպետական մրցակցությունը:

1939թ.–սանձազերծվեց Երկրորդ աշխարհամարտը՝ դառնալով մախորդ երկու իրադարձությունների տրամաբանական արդյունքը:

1949թ.–հիմնվեց ՆԱՏՕ-ն, որը Եվրոպայում դրեց համակարգային դիմակայության սկիզբը:

Նույն տարում հռչակվեց Չինաստանի ժողովրդական Հանրապետությունը: Այս իրադարձությունն ընդունվեց սոսկ որպես կոմունիստական սպառնալիքի աճի հերթական նշան: Կես դար անց պարզվեց, որ այն ժամանակ սկսվել էր մեծ պետության, անցյալում եւ ապագայում աշխարհի առաջատարներից մեկի՝ Կենտրոնական կայսրության վերականգնումը:

1959թ. – ապստամբների կողմից (Ֆիդել Կաստրոյի գլխավորությամբ) Հավանայի գրավումը: Այն դարձավ գաղափարախոսական դիմակայության գոտու մասշտաբային ընդլայնման նախանշանը: Իսկ բացի այդ, վկայեց նաեւ Երրորդ աշխարհում ազգային ինքնագիտակցության կտրուկ աճի մասին, ինչը հաջորդ մի քանի տարիներին հանգեցրեց տասնյակ նորանկախ պետությունների առաջացմանը: Նրանցից ամենեւին ոչ բոլորը ժամանակի ընթացքում ապացուցեցին իրենց կենսունակությունը, եւ դա նաեւ կանխորոշեց այսօրվա շատ խնդիրները:

1969թ.–ԽՍՀՄ-ի եւ ՉԺՀ-ի միջեւ կարճատեւ, սակայն կատաղի ռազմական բախում Դամանյան կղզու շուրջ: Ինքնին այս իրադարձությունը հազիվ թե հավակներ համաշխարհային ճանաչման, եթե նրան շուտով չհետեւեր Պեկինի ու Վաշինգտոնի պատմական հաշտությունը:

1979թ.– Իսլամական հեղափոխությունն Իրանում, որը բախտորոշ նշանակություն ունեցավ տարածաշրջանի եւ ողջ մուսուլմանական աշխարհի համար: Նույն թվականին իրականացվեց Խորհրդային Միության ճակատագրական ներխուժումն Աֆղանստան:

1989թ.– Կոմունիստական ճամբարի փլուզումը Եվրոպայում. «Չամերաշխության» կառավարությունը Լեհաստանում, Բեռլինյան պատի անկումը, «թավշյա» հեղափոխությունը Չեխոսլովակիայում, ռումինական ղեկավար Նիկոլաե Չաուշեսկուի արյունոտ վախճանը: Յենց այն ժամանակ, ելույթ ունենալով Կոսովոյի դաշտի ճակատամարտի 600-ամյակին, սերբական առաջնորդ Սլոբոդան Միլոշեվիչը շարադրեց ազգայնական ծրագիրը, որի կենսագործման փորձը հանգեցրեց հաջորդ տասնամյակի ցնցումներին:

1999թ.– ԱՄՆ-ն ու Եվրոպական երկրները, արբեցած «սառը պատերազմում» տարած հաղթանակի զգացողությամբ, իրենց իրավացիության եւ անպատժելիության գիտակցմամբ, հարձակվեցին Չարավսլավիայի վրա: Արեւմուտքի նկատմամբ Ռուսաստանի վերաբերմունքի մեջ տեղի ունեցավ հոգեբանական բեկում: Մոսկվայում իրենց վրա ընդունեցին Բելգրադի ռմբահարումները: Սկսվեց մի գործընթաց, որը հանգեցրեց Ռուսաստանի ու ՆԱՏՕ-ի միջեւ օտարման:

Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին անգամ Եվրոպայում մի երկիրը կամ երկրների խումբը հարձակվեց մյուսի վրա: «Սառը պատերազմի» տարիներին խայտառակ դրվագներ հերիքում էին. 1940-ականների կեսին անգլիական էքսպեդիցիոն կորպուսի կողմից Յունաստանում կոմունիստական պարտիզանական շարժման ջախջախումը, 1953թ. Գերմանիայում բանվորական ցույցի գնդակոծումը, 1956թ. Խորհրդային տանկերի կողմից բուդապեշտյան ապստամբության ճնշումը, 1961թ. Մոսկվայի աջակցությամբ Բեռլինյան պատի կառուցումը, 1968թ. ԽՍՀՄ եւ նրա դաշնակիցների զորքերի ներխուժումը Չեխոսլովակիա՝ վերջ տալու «պրահյան գարնանը»: Այնուամենայնիվ, գործը խաղաղ քաղաքների օդային հարվածներին չէր հասել:

Անավարտ դիմակայություն

Կոմունիստական մոդելի փլուզումից հետո թվում էր, թե վերջնականապես հաղթել է ամերիկա-Եվրոպական ուղղության ազատական ժողովրդավարությունը: Բայց անցած տարիների փորձը ցույց տվեց, որ քաղաքական-տնտեսական կառուցվածքի տվյալ ձեւն արմատավորվում է միայն Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում: Դրա համար

նրանց ցույց է տրվում լայնածավալ տնտեսական օգնություն, որին նրանք զոհաբերել են իրենց անկախության մի մասը:

Խիստ հավանական է, որ ռուսական նոր վերնախավը եւս պատրաստ էր գնալ այդ ուղիով: 1990-ականների սկզբին Արեւմուտքի հետ միավորման վրա վիթխարի՝ այժմ արդեն ծիծաղելի թվացող հույսեր էին դնում: Խոսում էին անգամ ՆԱՏՕ մտնելու ցանկության (այդպիսի հայտարարություններ հնչում էին նախագահ Բորիս Ելցինի եւ փոխնախագահ Ալեքսանդր Ռուցկոյի շուրթերից) ու Եվրոպական միության անդամ դառնալու ձգտման (վարչապետ Վիկտոր Չեռնոմիրոֆին) մասին: Դժվար է գնահատել, թե որքան լրջորեն էին Արեւմուտքում քննարկվում նման սցենարները, սակայն որոշումը եղավ մերժողական: Ակնհայտ է՝ այնտեղ գտան, որ Ռուսաստանը՝ որպես ինտեգրման օբյեկտ, չափազանց թանկ է, մեծ եւ պոտենցիալ ինքնուրույն:

Բոլորից շատ շահեց Գերմանիան՝ հասնելով ազգային միասնության: Գիտակցաբար իրեն «ընկղմելով» Եվրոպայի մեջ, նրան տալով իր անկախության մի մասը՝ այդ երկիրը վերածվեց լավագույն խորհրդանիշի, որ կա նոր Եվրոպական մշակույթում: Չնայած Գերմանիայի աճող տնտեսական հզորությանը, այլեւս ոչ ոք նրա ռեւանշիզմից չի վախենում:

Արեւմտյան Եվրոպան, շնորհիվ ինտեգրման նախագծի, կարողացավ հաղթահարել արյունալի անցյալը: Թվում էր, թե Բեռլինյան պատի խորտակմամբ ողջ Եվրոպան արդեն հասել է կանտյան «հավերժական խաղաղությանը», իսկ երկրագնդի վրա եկել է անդորրի ու բարգավաճման ժամանակաշրջանը: Նշենք, որ «սառը պատերազմից» դուրս գալու արդյունքը եղավ ոչ միայն պատմական թշնամիների՝ գերմանացիների եւ ֆրանսիացիների, այլեւ գերմանացիների եւ ռուսների հաշտեցումը՝ չնայած 20-րդ դարի թշնամանքի ամենասուկալի պատմությանը:

Սակայն բեկումնային 20-ամյակի վերջին պարզվեց, որ Եվրոպան, այնուամենայնիվ, չի կարողացել կտրվել իր անցյալից: «Պատմության ավարտի» փոխարեն մենք տեսնում ենք հին աշխարհաքաղաքականության վերադարձը՝ բազմապատկված նոր մարտահրավերներով, որոնք շատանում են, բայց, որպես կանոն, չեն լուծում սրված խնդիրները եւ կուտակվում են միմյանց վրա: Դիմակայությունն ու պառակտումը նոր ձեւով են վերածնվում: Իսկ 1990-ականների զլխավոր նվաճումը՝ ռազմական սպառնալիքի եւ համակարգային զինված դիմակայության վերացումը, կարող են լինել անցողիկ: Պատճառն այն է, որ թեեւ «սառը պատերազմը» Եվրոպայում հայտարարված է ավարտված, բայց, ըստ էության, դեռեւս անավարտ է:

Խորհրդային Միությունը կամավոր հեռացավ Կենտրոնական եւ

Արեւելյան Եվրոպայից: Մոսկվան, եվրոպական շատ մայրաքաղաքների (հատկապես Փարիզի ու Լոնդոնի) կոչերին հակառակ, թույլատրեց Գերմանիայի միավորումը եւ անգամ օժանդակեց դրան: Այդ ժամանակվա ռուսական քաղաքական դասը, ըստ էության, ԽՍՀՄ փլուզման, ռուսական պատմական տարածքների կորստի նախաձեռնողը եղավ: Դա արվեց ոչ միայն թերամտության կամ հայրենիքի զգացումի կորստի կամ էլ նոր ընտրախավերի՝ իշխանության գալու ձգտման պատճառով. գլխավոր պատճառը խորհրդային կոմունիզմից արագ թոթափվելու ցանկությունն էր:

Հրաժարվելով կայսրությունից (անգամ այն մասից, որն ընկալվում էր որպես սեփական երկրի պատմական տարածք)՝ ռուսներն «ընդհանուր եվրոպական տան» նոր դարաշրջանի գալստյան, «միասնական եւ ազատ Եվրոպայի» կերտման հույսն ունեին: Դա ոչ միայն բարեհոգի ինքնախաբեություն էր: Այդպիսի Եվրոպայի մասին այն ժամանակ բոլորն էին խոսում: Ուստի Կրեմլին թվաց, թե արեւմտյան ինստիտուտների, նախեւառաջ, ՆԱՏՕ-ի չընդարձակման գրավոր երաշխավորություններ պետք չեն եւ բավարար են Միացյալ Նահանգների ու Գերմանիայի առաջնորդների բանավոր խոստումները:

Ռուսները ոչ միայն կրեցին կոմունիստական դիկտատուրայի հիմնական լուծը, այլեւ արեցին ավելին, քան որեւէ այլ ժողովուրդ, որպեսզի այն տապալվի: Ուստի «սառը պատերազմից» նրանք դուրս եկան իրենց պարտված չզգալով եւ պատվավոր խաղաղության ակնկալիքով: Սակայն Արեւմուտքն, առաջին տարիների տատանումներից հետո, սկսեց իրեն պահել իբրեւ հաղթողի, իսկ ԽՍՀՄ-ի կողմից թողնված տարածքները դիտել ոչ որպես կամովին ազատած, այլ գրավյալ:

1990-ականների կեսին վերցվեց ՆԱՏՕ-ի ընդլայնման ուղեգիծ: Դաշինքի ընդարձակման առաջին ու երկրորդ ալիքների տակ գաղափարախոսական կամ նույնիսկ ռազմական հենք չկար, փոխարենը բավականացնում էր ձեռք բերվածն աշխարհաքաղաքականորեն ամրագրելու ցանկությունը՝ օգտվելով Ռուսաստանի թուլությունից ու երկրում տիրող քաոսից:

Առձակատումը վերականգնելու փորձ

ՆԱՏՕ-ի ընդարձակման առաջին ալիքի տարիներին այս տողերի հեղինակն արեւմտյան զրուցակիցներին բազմիցս հարց է տվել. մի՞թե դուք չեք հասկանում, որ մեծ պատմությամբ հսկայական երկիրը կըմբոստանա ու երբեք չի համաձայնվի իր պատմական սահմանների վրա դաշինքի ընդարձակմանը: Զրուցակիցներս լուռ համաձայնվում էին կամ

հեռացնում հայացքը՝ զուր հույսով, թե «ճշմարտության պահը» չի գա եւ տերությունը երբեք չի հիշի իր կենսականորեն կարելու շահերի մասին:

Մինչդեռ, Հյուսիսատլանտյան դաշինքը հակակոմունիստական պաշտպանական միությունից, ինչպիսին «սառը պատերազմի» տարիներին էր, վերածվեց հարձակողականի: Չարժե մոռանալ, որ վերջին 10 տարիների երեք խոշոր պատերազմները սկսել են հենց ՆԱՏՕ-ի երկրները: Դաշինքն ագրեսիա իրականացրեց Հարավսլավիայի դեմ՝ նրանից անջատելով Կոսովոն: Հյուսիսատլանտյան դաշինքի առաջատարը դաշնակիցների խմբով հարձակվեց Իրաքի վրա: ՆԱՏՕ-ն (ճիշտ է՝ միջազգային համաձայնությամբ), ըստ էության, հարձակողական պատերազմ է վարում իր պատասխանատվության սկզբնական գոտուց հեռու՝ Աֆղանստանում: Ախորժակները բացվում են: Ձգտելով ապացուցել իր օգտակարությունը՝ բյուրոկրատիան փորձում է դաշինքը դարձնել «էներգետիկական», որը ռազմաքաղաքական մեթոդներով կապահովի մյուս երկրների տարածքում գտնվող պաշարների (նույնիսկ «արկտիկական») հասանելիությունը:

Շնորհիվ ռուսական սահմանների մոտ էքսպանսիայի ու երկրների ներքաշման, որոնց վերնախավերի մի մասը նախորդ դարերի անհաջողությունների եւ պարտությունների պատճառով Ռուսաստանի հանդեպ պատմական բարդույթներ ունի, ՆԱՏՕ-ում սաստկանում են հակառուսական տրամադրությունները: Նման երկրների թվի ավելացման չափով էլ օբյեկտիվորեն աճում է ճնշումը, որպեսզի դաշինքը վերադարձվի Մոսկվայի զսպման իր դասական խնդրին: Կերպարի բարելավման ջանքերին հակառակ, ՆԱՏՕ-ն ռուսների աչքին դիտվում է անհամեմատ ավելի թշնամական կազմավորում, քան նախորդ 20 տարիներին էր: Ես հեռու եմ նրանից, որպեսզի պնդեմ, թե դաշինքը սպառնում է կամ կարող է սպառնալ Ռուսաստանին: Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունն անցյալում էլ ի վիճակի չի եղել արդյունավետ կռվել: Դա, առավել եւս, ճշմարիտ է այժմ, ինչը ցույց է տալիս Աֆղանստանը:

Քաղաքականապես ՆԱՏՕ-ի ընդարձակումը վերածվել է եվրոպական անվտանգության հիմնական սպառնալիքի: Դրա պատճառով «հին Արեւելքի» (ԽՍՀՄ-ն ու նրա արբանյակները) եւ «հին Արեւմուտքի» միջեւ դադարած առձակատումը փոխարինվում է նորով. մի կողմից՝ Ռուսաստանը, մյուս կողմից՝ Միացյալ Նահանգներն ու «նոր» եվրոպացիների մի մասը: «Հին» եվրոպան պատանդ է հանդիսանում եւ հեռու գնալ չի կարող: Եվ այս դիմակայությունը ծնվում է իրոք փոփոխվող, առավել անկայուն ու վտանգավոր աշխարհի խորապատկերի վրա:

«Սառը պատերազմը», քաղաքական խավերի (այդ թվում՝ ռուսական)

ուղեղներում լինելով անավարտ, անավարտ է նաեւ ինստիտուցիոնալ եւ կազմակերպական առումով: Եվ «սառը պատերազմի» ինստիտուտները, առաջին հերթին՝ ՆԱՏՕ-ն, ինչպեսեւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպությունը, որոնք սկզբնապես ստեղծված են եղել «սառը պատերազմի» սպասարկման համար, պարբերաբար առճակատում են հրահրում:

Ընթացիկ տասնամյակի կեսին ամերիկյան իսթերիչմենթի մի մասը, որը շահագրգռված է Եվրոպայի վերջնական կայացմամբ եւ, համապատասխանաբար, հզորացմամբ, կրկին սկսեց առաջ քաշել դաշինքի ընդլայնման գաղափարը՝ այժմ արդեն դեպի Ուկրաինա: Ամերիկյան հակահրթիռային պաշտպանության համակարգի տեղակայման պլանները պառակտեցին Յին աշխարհը: Մոսկվան համառորեն ընդդիմացավ:

Հուսով եմ, որ պատմական հեռանկարում Հարավ. Օսիայի վրա Թբիլիսիի հարձակումը եւ Ռուսաստանի պատասխանը ուսանելի դրվագ կլինեն: Ձոռերը՝ օսերը, ռուսները, վրացիները, կարող են ամենեւին էլ զուր չլինել: Ռուսական զորքերը վճռական ռազմական հակահարված հասցրին ՆԱՏՕ-ի անվերջ ընդարձակման տրամաբանությանը, որը եթե չկանգնեցվեր, գործնականում անխուսափելիորեն կհանգեցներ մեծ պատերազմի: Եվ ոչ թե Վրաստանում, այլ Ուկրաինայի շուրջ՝ գրեթե Եվրոպայի կենտրոնում:

Եթե ԱՄՆ-ը եւ Արեւմտյան Եվրոպան փորձեն այսուհետեւ ընդարձակել ՆԱՏՕ-ն դեպի արեւելք, Ռուսաստանին ոչինչ չի մնա, քան ցանկապատի հետեւում թաքցված միջուկային հրթիռները բերել մարտական պատրաստության, պատրաստվել վատթարագույնին՝ փորձելով առավելագույն վնաս հասցնել մյուս կողմին: Գլոբալ խնդիրների լուծման համար համագործակցության մասին հարկ կլինի մոռանալ: Անհնարին կդառնա միջուկային դիմակայության մակարդակի եւ որեւէ լուրջ կրճատում:

Չեմ կարծում, թե նավթային հորմոններից պրկված մկանների մասամբ թուլացման պատճառով Ռուսաստանի մոտեցումն ավելի մեղմ կլինի: Թերեւս՝ հակառակը. կոշտ հակազդելու պատրաստակամությունը կսաստկանա, առավել եւս, որ արտաքին սպառնալիքը ներքին խնդիրների պատեհ հիմնավորում է: Քաղաքական եւ տնտեսական արդիականացման մասին հարկ կլինի մոռանալ: Այնպես որ, նոր դիվանագիտությունը Եվրոպայի համար կլինի դրամա, աշխարհի համար եւս մեկ խնդիր, աղետ Ուկրաինայի եւ ողբերգություն ռուս ժողովրդի համար:

Հարավօսական դրվագից հետո Միացյալ Նահանգներին եւ իր պատվիրատուներին չհաջողվեց սանձազերծել նոր, թեկուզեւ ծաղրանկարային «սառը պատերազմ»: Չցանկացան «հին»՝ մայրցամաքային եվրոպացի-

ները: Ապա համաշխարհային տնտեսական ճգնաժամը հերթական անգամ ընդգծեց նոր խնդիրների սրությունը, կրկին ցույց տվեց, թե որքան զավեշտալի են նախորդ ժամանակներից ժառանգված խառնակչություններն ու հին մտածողությունը:

Փակել «Պանդորայի արկղը»

«Սառը պատերազմի» անավարտ լինելը ստեղծում է վտանգավոր վակուում: Եթե ՆԱՏՕ-ի ընդարձակման փորձերը շարունակվեն, գոյություն ունի Ռուսաստանը ռելիզիոնիստական պետությունից (որը փոխում է 1990-ականներին իրեն պարտադրված աննպաստ խաղի պայմանները) ռեանշիստականի վերածվելու սպառնալիք: Ի զորու չլինելով հաղթահարել իրենց քինախնդրությունն ու ազահությունը՝ Եվրոպացիները մի անգամ արդեն նման սխալ կատարել են՝ Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայի վզին փաթաթելով անարդար Վերսալյան հաշտությունը: Այդ սխալի կրկնումը չի կարելի թույլ տալ:

Անհրաժեշտ է հավաքական անվտանգության մասին նոր համաեվրոպական պայմանագիր՝ ստորագրված կան առանձին երկրների, կան ՆԱՏՕ-ի, Եվրամիության, Ռուսաստանի եւ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության կողմից: Այդ պայմանագրին կարող են միանալ ներկայիս անվտանգության համակարգերում չընդգրկված երկրները՝ ստանալով բազմակողմանի երաշխիքներ: ՆԱՏՕ-ի ընդարձակումը դե-ֆակտո սառեցվում է:

ԵԱՀԿ-ն վերածվում է Եվրոպայի հավաքական անվտանգության եւ համագործակցության կազմակերպության, ձեռք բերում նոր, այդ թվում՝ ռազմաքաղաքական գործառույթներ ու զրկվում «սառը պատերազմի» գեներից: Ապագա պայմանագրում հարկավոր է հաստատել Հելսինկյան եզրափակիչ ակտի՝ սահմանների անխախտելիության մասին դրույթը՝ կանխելու համար պետությունների հետագա մասնատումը կամ հակամարտությունների ուժային լուծման արդյունքում նրանց միավորումը: Կոսովոն, Հարավ. Օսիան եւ Աբխազիան պետք է լինեն վերջին պետությունները, որոնք անջատվել են ուժային մեթոդների օգտագործմամբ: Հարկավոր է փակել այդ «Պանդորայի արկղը»՝ գոնե Եվրոպայում:

Եվրոպայի հավաքական անվտանգության եւ համագործակցության փաստաթուղթը պետք է լրացվի Ռուսաստանի ու Եվրամիության միավորման մասին պայմանագրով՝ հիմնված ընդհանուր տնտեսական եւ էներգետիկ տարածքի, միջազգային ասպարեզում քաղաքականության համակարգման դրույթների վրա:

Եվրամիության ու Ռուսաստանի հարաբերություններում, անշուշտ, առկա է աշխարհաքաղաքական գործոնը, հզոր է մրցակցության տարրը: Սակայն ԵՄ-ը, ի տարբերություն ՆԱՏՕ-ի, ստեղծվել է ոչ դիմակայության համար: Գլխավոր նպատակները, որոնք կանգնած են եվրոպական ինտեգրման նախագծերի հետեւում, եղել են պատերազմների ժառանգության եւ պետական ազգայնականության հաղթահարումը, Եվրոպայի տնտեսական արդյունավետության ու բարեկեցության ամրապնդումը: Առճակատման ժառանգական կողի բացակայությամբ է բացատրվում, թե ինչու է Ռուսաստան–ԵՄ հարաբերությունների հիմքում ընկած համագործակցության ու մերձեցման հզոր ներուժ:

Համաեվրոպական ճարտարապետությունը կարելի է լրացնել Զինաստան–Ռուսաստան–ԱՄՆ եռակողմ փոխգործակցությամբ՝ խոշորագույն համաշխարհային խնդիրներ լուծելու համար, որն առաջարկում են չին ազդեցիկ տեսաբանները: Հարկավոր է ընդլայնել Շանհայի համագործակցության կազմակերպությունը եւ նրա աշխատանքներին ներգրավել Միացյալ Նահանգներն ու ԵՄ-ը՝ թեպետեւ դիտորդի կարգավիճակով:

Առանձին ծառայած է համաշխարհային տնտեսության ու ֆինանսների կառավարման նոր համակարգի հարցը, որի ստեղծումն, առանց նախորդ առճակատումներից ժառանգություն մնացած խնդիրների տակ գիծ անցկացնելու, էլ ավելի դժվար կլինի:

Կարելի է ոչ քիչ այլ տարբերակներ մտածել: Թող որ նրանք առայժմ բարեհոգի երազանքներ թվան: Բայց եթե բանականորեն չդրվեն ռազմավարական խնդիրներ, մենք դատապարտված ենք քարշ գալու իրադարձությունների (թերեւս՝ առավել ողբերգական) պոչից: Առաջ շարժվելու համար անհրաժեշտ է ավարտին հասցնել «անավարտ պատերազմը»:

«Россия в глобальной политике»

թիվ 2, 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տերտերյան

«ՈՒԴԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ»

ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 1

Ռուբեն Մելքոնյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ 6

Սարգիս Հարությունյան

ՌՈՒՄԱՍՏԱՆ–ԹՈՒՐՔԻԱ

ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 11

Կարեն Վերանյան

ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ՆԱՏՕ–ԱԴՐԲԵՋԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ 16

Արաքս Փաշայան

ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ 23

Սեւակ Սարուխանյան

ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ 28

Սթիվեն Քոհեն

«ԱՇԽԱՐՀԸ ԴԱՐՁԵԼ Է ԱՌԱՎԵԼ ՎՏԱՆԳԱՎՈՐ» 33

Սերգեյ Կարազանով

ԱՆԱՎԱՐՏ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ» 41

*Շապիկին պատկերված է
Արձակ լիճը*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 4 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: